

6460

«Մանկավարժական»

891.99

Ա-79

Երևանի Մարգիս Ծղիկարեանցի (Ղարաբեկեանցի):

ՍՏԵՓՈՆ ԱԻՆՏԻԷՆՆ—ԲՆՆՆՆՆՆՆ

# ՂԵԿԱՎԱՐՆԵՐ

ԳԻՐԲ Ա.

I. ԿԱՊ ԲՈՆՈՂԸ

II. ՄԵՐ ՏԵՐԸ

(Արտատպած «Ղումայ» հանդիսից):



800

90-47

ԹԻՖԼԻՍ

Տպարան Ս. Ըարանեի, Նիկոլ. փ. տ. 21

1897



891.542-3

ՍՏԵՓԸՆ ԸՆԵՏԻՔԵԸՆ—ԲԸՆԸՆՑԵՑԻ

Է-79

ս. ք.

# ՂԵԿԱՎԱՐՆԵՐ

I. ԿԱՊ ԲՈՆՈՂԸ

II. ՄԵՐ ՏԵՐԸ



(Արտատպած „Լուսնայ“ հանդիսից):

1001  
1096

1001  
1096

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Ըարաձեհի, Նիկոյ. փ. տ. 21

1897

2011



Յ Կ Ո Ղ Վ Ն Գ Ն

Ի ՆՈՒՄԱՐԱՆ

Ինքնիշխանության համար

ՏՆՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՏՆՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՍՈՒՄԱՐԱՆ ԿԻՆՔԱՆՈՒՄ

ՆԱԽԱՐԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՍԻՆ

2003

Досвояно Иезыро, Индиг, 3-го марта 1897 г.







## ԿԱՊ ԲՈՆՈՂԸ

Յուլիսի սկզբներին Կաթնաշէն գիւղը մեռելային կերպարանք է ստանում. փողոցներում բացի հաւից-ձիւից ուրիշ ոչ մի կենդանի չի երևում. կանայք շուաքի տակ քաշուած գործում են՝ կամ մանում, իսկ երեխաները լողանում են գետի մէջ: Ամեն ինչ խոյս է տալիս արեգակի այրող ճառագայթներից, ամեն ինչ օթեան է փնտռում փոքր ինչ զովանալու համար: Գիւղում տղամարդ չի երևում: Ղուլուկն ցատի տակի շուաքում միայն շարուած են մի քանի անգործ ծերունիներ, որոնք սովորաբար խօսում են վերջին հեղեղների կամ քաղաքից ստացուած նոր լուրերի մասին:

Գիւղը դատարկ է. գիւղում «փափախաւոր» չի երևում:

—Ո՞ւր է ձեր տղամարդը, — կը հարցնես մի որ և իցէ Մարիամ աքօր:



— Սարին է, — կը լինի նրա պատասխանը, — Բնչ ես հարցնում. միթէ այսօրուայ օրը տղամարդը տանը կը նստի, — կաւելացնի նա:

Եւ իրաւ գիւղացին տարուայ այդ միջոցին «հարամ» կը համարի իր կերածը, եթէ պարապ տանը նստի: Նա դուրս է գալիս դաշտը. նրա գործունէութեան ասպարէզը այդ ժամանակ տանից դուրս հեռու դաշտումը կամ սարին է:

Ամբողջ գիւղը բարձրանում է կանաչազարդ լեռները, սարը. այնտեղ խոտի հունձ է: Իւրաքանչիւր գիւղացի շտապում է հայթայթել իր «աչքի լիս» ու հաւատարիմ ընկեր անասունի ամբողջ տարուայ ապրուստը:

Անցնենք սարը:

Այստեղ ասեղ գցելու տեղ չը կայ. գիւղի թէ մեծ, թէ փոքր իրանց բեռնակիր ձիաների ու ջորիների հետ միասին այստեղ են ժողովուած: Վերջիններիս բազմաթիւ երամները ծածկել են լայնածաւալ արօտատեղերը: Սրանց խրինջոցը, միանալով հարիւրաւոր գեղջուկների բարձրաձայն աղաղակների հետ, ականջ է խլացնում: Գիւղացիները, գերանդիներով զինաւորուած, այս ու այն բլուրի գլխին խմբուած, տաք վիճաբանութիւն-

ներ են բանում իրար մէջ խոտի բաժանման մասին: Աւելորդ է ասել, որ նրանց վիճաբանութիւնները համեմուտ են ամենընտիր լիջոցներով: Պատահում է, որ միմեանց վրայ գերանդի են բարձրացնում, բայց դրանք տեւանքը հեռու չի անցնում: Յիշոցները գրգռելով խաւորապէս ուղղուած են լինում խոտերը բաժանողի հասցէին: Վերջինս խոտի հնձից մի շաբաթ առաջ «ընտրուում» է ամբողջ համայնքից, — ընտրողները իսկապէս տանուտէրն ու մի քանի աղսախկալներ են լինում, — ու մի որ և է գրագէտի ուղեկցութեամբ գընում է սարը խոտատեղերը գիւղի ծխերի մէջ բաժանելու: Սարի այն մասը, որը յատկացրած է լինում խոտերին և որն անարատ է մնում մինչև խոտի հունձը, բաժանուում է մի քանի գլխաւոր մասերի: Բաժինների թուին համեմատ կազմուում են բաժանաթղթեր, որոնց մէջ որոշուում են իւրաքանչիւր բաժնի սահմաններն ու տարածութիւնը: Բաժանաթղթերի թուի համեմատ կազմուում են ծխերի, այսինքն տների, ցուցակներ ու այդպիսով իւրաքանչիւր խոտաբաժին ընկնում է տասը կամ քսան տան: Վերջիններս կամ միասին հնձում են խոտը ու հնձածը բաժանում, կամ բաժանում են իրար մէջ ընդհա-



նուր խոտաբաժինը ու առանձին հնձում: Ընդհանուր բաժինները վիճակ են գցում տների մէջ, կամ թէ, ինչպէս գիւղացիներն են ասում, ծեղ են գցում, այդ պատճառով էլ բաժանաթուղթը կոչւում է «ծեղ»:

Կաթնաշէնում խոտերի բաժանող համարեա ամեն տարի սովորաբար ընտրւում է Սեւուց Եղին: Սրան ի պատիւ ծերութեան բոլորն էլ Եղի ամի են ասում: Գիւղացիները թէև մի առանձին համակրանք չեն զգում դէպի նա, բայց այնուամենայնիւ էլ գործ չի լինում, որ Եղի ամու ձեռքովը չանցնի, էլ բան չի մնում, որ նրա մատը խառը չը լինի մէջը: Պրիստաւ կամ գաւառապետ եկած ժամանակ Եղի ամին է գիւղացիներին «պարզ երես անում» աղի առաջին շնորհիւ իւր ճարտարախօսութեան. մի որ և է խաթա (աղէտ) է պատահում, Եղի ամին է նրանց կապը բռնում ու ուղիղ ճանապարհ դուրս բերում: Շատ եռանդուն ու փորձուած «կապ բռնող»<sup>1)</sup> է Եղի ամին և հէնց շնորհիւ իր այդ փորձառութեան է կարողանում կաթնաշէնոց պէս ինքնագլուխ ու անհնազանդ մարդկանց կապը իր ձեռքում պահել միշտ: Խոտերը բա-

<sup>1)</sup> Հասարակական գործիչ, ղեկավար:

ժանեղիս Եղի ամին իրան մի առանձին ձանձրութիւն չի պատճառում երբէք. նա այնքան փորձուած մարդ է այդ բանում, որ բոլորովին աւելորդ է համարում խոտատեղերը շրջել լաւը վատից ջոկելու համար: Սովորաբար բարձրանում է մի որ և է լեռան գագաթ, այնտեղից դիտում խոտերի ամբողջ տարածութիւնը ու որոշում բաժինների սահմանները: «Գրի, ադա», — ասում է նա գրագրին ու ըսկսում թելադրել բաժանաթղթերը, ծեղերը: Երբեմն պատահում է, որ գրագիրը մի որ և իցէ նկատողութիւն է անում Եղի ամուն, ասելով, որ այս ինչ բաժինը շատ փոքր է, կամ թէ այնտեղ խոտ քիչ կայ:

— Ե՛հ, հա՛ երանի իմ էս կատարիս, որ դու պտես ինձ խելք սովրեցնիլ, — պատասխանում է նրան արհամարհանքով Եղի ամին, — դու գրի, ինչ որ ես ասում եմ, քո բանը ղալամի<sup>1)</sup> ճումռոցն է: Երէկ-մէկէլ օրը դու այսքան փոքր երեխայ էիր, հիմա մի-երկու ալիբ-բէն ես սովորել, գիտես, թէ մեծ մարդ ես դարձել, որ իմ խելքի կտրածին հաւան չես կենում:

— Եղի ամի, ահր անցեալ տարի այդ բա-

<sup>1)</sup> Գրչի:



Ժինը մեզ ընկաւ, խոտ չի կար, բոլորովին մաղբուն մնացինք <sup>1)</sup>։ Հիմա էլ մի որ և իցէ խեղճի կընկնի, ճարը կտրած խոտ բաժանողին ուշուէն կը տայ։ Մեծ մարդ ես, արի այդպէս մի անիր։ Հոգիդ խեղճ ա, այսօրվաղը մեռնելու ես, հէնց արա, որ քեզ ողորմի ասող լինի։ Եկ ինձ լսիր, այն երեւոյցող ձորամէջն էլ այդ բաժնի հետ գցիր. այնտեղ լաւ խոտ կայ. անցեալ շաբաթ ես ինքս այնտեղ եղել եմ ու բոլոր խոտերը լաւ զըննել։

— Զէնդ կտրի, խէվ հարամ զադա <sup>2)</sup>։ գնա այդ քո վարժապետին սովրացրու։ Դէ՛ Տէր-Պետրոս, եկ ամեն օր մեր եղծումը <sup>3)</sup> քորոզ տուր, — ասում է նա ինքն իրան, — թէ շկօլ բաց արէք, վարժապետ բերել տուէք։ Երէցին լսում ենք, շկօլ բաց անում, վարժապետ բերել տալի, ջահիւ-ջհուլը գնում է այլեւ-բէնի հօտն առնում ու գալի մեզ խելք սովրացնում։ Ահր ըսհէնց բան կլինի՞, երկիր-աշխարհ ըսհէնց բան տեսել ա՞։ Սրա չափ վախտս (ցոյց է տալիս նա դէպի գրագիրը) ո՞վ կը համարձակուէր իրանից մեծին ասել, թէ աչքիդ վերեն ունք կայ։ Ինչ հողը գըլ-

<sup>1)</sup> Զրկուեցինք։ <sup>2)</sup> Յիմարի որդի։ <sup>3)</sup> Եկեղեցում։

խիդ տաս, որ հիմա բոլորն էլ Տէր-Պետրոսի խօսքովն են բան բռնում ու իրանց տներն իրանց ձեռքով քանդում։ Դրի, ադա, գրի, — դառնում է նա դէպի գրագիրը, — քեզ ինչ ասեմ. դու մեղաւոր չես։ Աստուած Տէր-Պետրոսի ու քո վարժապետի տները քանդի. գրի, — կրկնում է Եղի ամին ու բռնութիւն ախորժակով վեր ծծում։

— Եղի ամի, հիմա ինչ որ է, այդ թող իրան կենայ. արի այս մի բանումն ինձ լըսիր, ձորամէջը այս բաժնի հետ գցի։ Խեղճ ա դորա տէրը, նա էլ քեզ պէս թագաւորին հարկ ա տալիս, նա էլ քեզ պէս առանց հայվան <sup>1)</sup> ապրել չի կարող, նրան էլ հարկաւոր է խոտ։

— Ադա՛, ա թուրքի հանք, ահր բաւական է, ինչքան զահլէս տարար, ասելը մին կը լինի, երկու կը լինի. հոգիս թող հանգիստ իր տեղը կենայ, ինձ մեղքի տակ մի գցիր, Վարդապառին պիտի հաղորդուեմ, ա՛ քո. . . Տէր, մեղա՛յ քեզ Աստուած, բերանս ինչ ա գալիս. . . :

— Ահր ձորամէջն ինչու ես ղըաղ <sup>2)</sup> դընում, պատճառն ինչ ա, միթէ նա գիւղին

<sup>1)</sup> Անասուն։ <sup>2)</sup> Մի կողմ։



չի պատկանում, — տաքանում է գրագիրը, Եղի ամուսն իր մօր հասցէին մի ոչ այնքան դիւրեկան հաճոյախօսութիւն լսելով, — Բնչու համար ես ուզում դու այդ ձորամէջը ուրիշ բաժնի վրայ դնել, քանի որ նա այդ բաժնին է կպած:

— Զորամէջը ոչ մի բաժնի վրայ չեմ դրնում, — պատասխանում է համբերութիւնը հատած Եղի ամին, — այդ ընհէնց իմ յօժար կամքով զրադ եմ դնում միայն Սարգիս-բէգի ու ստարշինի <sup>1)</sup> համար: Երկուսն ալ, լոյսն ու զարդարանքը նրանք են, և որդի պէտք ա մեծից սկսած մինչև փոքր ամեն բանում նրանց շահենք, նրանց խաթրն առնենք: Դու դեռ երէկ-մէկէլ օրուայ երեխան ես, դեռ քեօրփա <sup>2)</sup> ու ջահիլ ես, սեն ու սպիտակը դեռ իրարից չեո ջոկում. դու Բնչպէս կարող ես իմանալ այդ մարդկանց զադը <sup>3)</sup>: Քո վարժապետը թող գայ դեռ առաջ ինձանից դաս առնի ու յետոյ ձեզ բէն-այիբ-բա, բէն-եչ-բէ սովորեցնի:

Խեղճ գրագիրը, լսելով Եղի ամուսնուած անունները, երկիւղածութեամբ կծում է պռօ-

<sup>1)</sup> Տանուտէրի: <sup>2)</sup> Կաթնակեր: <sup>3)</sup> Պատիւը:

շը ու կրկին շարունակում սուս ու փուս «ճումաացնել» գրիչը:

Բլուրներն աւելի ու աւելի են սևանում. գիւղից նոր և նոր խմբեր են գալիս: Սարը կեանք ու կենդանութիւն է ստանում, ուր դարձնես հայեացքդ, ամեն տեղ գիւղացիների ստուտը խմբեր կը նկատես: Մի տեղ շարունակում են տաք վիճաբանութիւնները, մի ուրիշ տեղ կէսօրելու են ժողովուրդը: Սըրանցից որը քնած է, որը գերանդին է սարքում, սրում, որը Եղի ամուն է բամբասում: Խոտ հնձող դեռ ոչ մի տեղ չի երևում. հնձի առաջին օրը սովորաբար անց է կենում այդ վիճաբանութիւնների, բամբասանքների, կամ ըստ գիւղացոց «ղոբոցի» մէջ:

— Եարաբ <sup>1)</sup> մենք այդ քեօփակից <sup>2)</sup> երբ պէտք է պրծնենք, — ասում է Բաղունց Կարապետը, — շէնս դա քանդեց, քարուքանդ արաւ: Բա մենք խեղճ չենք, մեղք չենք, մեզ Աստուած չի ստեղծել, մենք թագաւորի ըռհաթ <sup>3)</sup> չենք: Ե՛րբ պտի շէնս այդ մարդակերների ճանկերից դուրս գայ, երբ պտի մեր հացը հալալուի: Կալի հողումը խոտ

<sup>1)</sup> Արդեօք: <sup>2)</sup> Ծերունուց: <sup>3)</sup> Հարկատու հպատակ:



կայ, որ այնտեղը Սևունց Եղին տասնութ տան է տուել, թէ գնացէք, հնձեցէք: Ահա ես ընտեղ ինչ հնձեմ, ուր մի ծեղ, մի չոփ չես գտնիլ. թէ աչքդ կոխես: Ըսհենց բան կը լինի, ա խալիւր (ժողովուրդ), ըսհենց օլին ու մասխարութիւն կը լինի: Կալի հողը երբ է ղուրուղչի <sup>1)</sup> երես տեսել: Զատկիցն սկսած մինչև օրս այնտեղ Սարգիս-բէգի ոչխարներն ու ձիաներն են արածելիս ըլել, իսկ հիմա Սևունց Եղին Յուրտ աղբրի ձորամէջի կատաղած խոտերը նրան ու ստարշինին է տուել ու ինձ տասնութ տան հետ ուղարկել Կալի հողը, թէ՛ Կարապետ, գնա՛ ընտեղ խոտ հընձի: Ահա Կարապետը քեզ թաղի, Սևունց Եղի, Կալի հողումը խոտ կայ, որ նա գնայ հնձի. մարդ անաստուած կը լինի, այդքան էլ կը լինի: Չեմ իմանում այդ քեօփակին ով ա վաքիլ <sup>2)</sup> ջոկում, թէ՛ գնա՛ խոտերը բաժանի: Եսօր քսան—երեսուն տարի է, ինչ աչքս բաց եմ արել. ամեն տարի այս բանը դրա ձեռքովն է անց կենում ու ամեն տարի միջի մաղբունը ինձ պէս քեասիբն <sup>3)</sup> է մնում:

— Ո՛նց թա ով ա դրան ջոկում, միթէ

<sup>1)</sup> Խոտերի պահպան: <sup>2)</sup> Լիազօր: <sup>3)</sup> Աղբատ:

չես իմանում, — խօսում է Վարանանց Թուռնին: — Երբ մենք դէս ու դէն ցրուած ամենքս մեր քեասիբութիւնին ենք գնում, Սարգիս-բէգն ու ստարշինը Եղին աչքով-ունքով են անում ու դէպի սարը ճանապարհ գցուլ: Ետոյ մի քանի իրանց իմացած մարդկանց ասում են, թէ Սևունց Եղին ուղարկել ենք սարը խոտերը բաժանելու: Այդ մարդիկն էլ, որոնք սաղ տարին շինիս մեծերի՝ չորս կողմն են շուռ գալիս, ասում են. «չատալա էք արել. Եղին է, որ խոտերի ժամանակ կարգ, կանոն է պահպանում. եթէ նա չը լինի, իւրաքանչիւր տարի արիւնհեղութիւն կը պատահի սարին»: Եւ այդպիսով Եղին դառնում ամբողջ շինի վաքիլ, հասարակի <sup>1)</sup> կողմից ընտրուած ու յետոյ իր խելքի կտրածն է անում. այդպիսով Սևունց Եղին մեզ էլ շինած, մեր կապը միշտ իր ձեռքումն է պահում:

— Դրուստ ես ասում, ա Թուն, դրուստ, — մէջ է մտնում Խալիֆանց Դաւիթը, — շինիս որ բանը չի ընդհենց անցնում: Որ մենակ խոտերի բաժանելը լինի, դա գլուխը քարը, եօլա կը գնայ. թէ խոտ, թէ հանդ, ամեն բան այդ մարդկանց ձեռովն է անցկենում, իսկ

<sup>1)</sup> Հասարակութեան համայնքի:



մէջ տեղը մեր տունն է քանդուում, մենք ենք զրկւում, կուժն ու կուլէն վերջը մեր գլխին է կոտրւում: Ի՞նչ անես, ձեռուքդ թնչ է գալիս. ոչ գիր ենք գիշում, ոչ դալամ. հայվան մարդիկ ենք: Որ շլապկաւորի հետ խօսում ենք, ձեռաց <sup>1)</sup> զակւօնից ու մեծաւորից է խաբար տալիս ու աչքերնիս կապում: Շինիս սուգիւքն ու իշխաններն էլ հօ մեր միսն է մնացել, որ ուտեն. էլի մեղայ շլապկաւորներին, ոչ մեղայ դրանց: Սովի տարին ամբողջ երկու ամիս տանով-տեղով չարչարուեցի, շան օր, շան հաւ քաշեցի, Լալուկ քարի գլխին մի հող խմհատ <sup>2)</sup> արի ու վաբեցի: Առաջի տարին այնքան էլ չեկաւ, բայց երկրորդ տարին հողս կատաղեց. էն տարին իմ տունը համարեա թէ նա պահեց: Էս որ տեսաւ Նարմաղանց Ստեփանը, ատամները սրեց: Ինքը սուգիւ լինելով, ստարշինի հետ խօսքը մին արաւ ու մի կիրակի օր եխծի դը-

<sup>1)</sup> Իսկոյն:

<sup>2)</sup> Խմհատ անել՝ կը նշանակի հողը մաքրել թփերից, արմատներից ու այդպիսով պիտանի դարձնել վարելու համար: Խմհատը մնում է միշտ տիրոջ սեպհականութիւն ու երբէք ուրիշ համայնական վարելահողերի հետ բաժին չի դընւում:

ռանը յայտնեց խալխին, թէ խալիանց Կաւթի Լալուկ քարի գլխի հողն էլ պէտք ա ուրիշ վարելահողերի հետ բաժին դնուի ու ծեղ գցուի. ում որ ընկնի, թող նա գնա վարի:— Ադա՛, Ստեփան, այդ ո՞նց հող ա, որ դու ուզում ես բաժին դնել,—ասացի ես,—ո՞վ է ինձանից առաջ այնտեղ վար արել, ո՞վ է սերմ գցել: Անվերի քօլ <sup>1)</sup> ա ըլել, ես եմ խմհատ արել. տանով—տեղով, սոված-ծարաւ արին քրտինք եմ թափել վրան, իսկ հիմա դու ուզում ես ձեռքիցս խլել: Բա քեզ Աստուած չունե՞ս, խեղճ չեն իմ խիզանը <sup>2)</sup>, էս եղծէն էլա վախում չես:—Ո՞վ ա ասում խմհատ ես արել, ո՞ւմ գլուխ ես ուզում կապել,—պատասխանեց Ստեփանը,—երկու քար ես դէն ձգել ու մի արմատ պոկել—խմհատ ես արել: Որ ըտհէնց ա՛, ես էլ կը գնամ Չոփուրանց երկու-թւի <sup>3)</sup> հաչա-կաղնին պոկեմ ու հողը վարեմ և յետոյ ասեմ, թէ նա իմ խմհատն ա, թող չեմ անիլ, որ հասարակի հողերի հետ բաժին դնուի»: Խալխը ծիծաղեց: Ստեփանը ինքնաբաւականութեամբ դարձաւ դէպի գրագիրը, ասելով. «Եսդա՛, գրի՛, գրի՛ Խալիանց

<sup>1)</sup> Վայրենի անտառ: <sup>2)</sup> Երեխաները: <sup>3)</sup> Երկու թւի-երկու կողմից վարուող հող:



Գաւթի Լալուկ քարի գլխի հողը:— Ի՞նչ,— հարցրեց գրագիրը,— հողը, թէ խմհատը:— Հողը,— պատասխանեց բարկութեամբ Ստեփանը,— խուլ էր, լսեցիր ոչ, որ ասացինք, թէ նա ընտեղ խմհատ չի արել: Գրագիրը գրեց սուգիի ասածը: Մի շաբթից յետոյ Ստեփանը Եղին բորձրացաւ սարը հողերը բաժանելու. ծեղ գցեց,— Աստուած ինքն այն ծեղ համարի,— ու խմհատս ընկաւ Շարմաղանց Ստեփանին: Էս օր թամամ երեք տարի ա, ինչ նա խմհատս վարում ա, ինչ նրա հացն ա ուտում: Իսկ ես փափախս աչքերս գցած, ձեռս ծոցումս դրած ամեն կերակրի գնում եմ եխծի դռանը կանգնում, թէ տեսնեմ երբ է Սեւունց Եղին հողերը բաժանելու և ինչ ինչ ինչ բաժին է տալու, որ գնամ վարեմ:

— Սեւունց Եղին... Աստուած Սեւունց Եղիի տունը քանգի,— խօսում է կրկին Բաղունց Կարապետը,— այդ քեօփակը որ Աստուածանից չը վախի, մեզի եսիր <sup>1)</sup> կը տա: Նի, դուք ի՞նչ էք գիտում: Լաւ դա ու Տէր-Սսէսանց Մինասը չէին, որ կռուի տարին Աւագանց Մաթոսի թւի տակը մտած ուզում էին նրան իր եղբորտանցով բէգութիւն տան,

<sup>1)</sup> Գերի:

չինիս վրայ տէր շինին:

— Կարապետ, դու լաւ կիմանաս, Մաթոսը գրանց ի՞նչ էր տուել, որ այդ քեօփակները նրա համար այնքան տափերը պոկում էին <sup>1)</sup>,— հարցնում է Վտրանանց Թունին:

— Ոնց թա ինչ էր տուել, խի գիտում չէս: Մաթոսը ակռոթնի սուգումը դուլլուղ <sup>2)</sup> էր անում, Եղին ու Մինասն էլ Նազար-բէգի հետ տափի դաւի <sup>3)</sup> ունէին. Աստուծու օրն ակռոթնումն էին մթնացնում ու Մաթոսի տանը: Շէնս որ քանդէիր, ոչ Մինաս կը գըտնէիր, ոչ Եղի,— հարկը դա շահարներում <sup>4)</sup> կորած էին լինում: Մաթոսը գրանցից կերաւ, կերաւ, յետոյ միտք արաւ՝ «այս մարդիկը շինի իշխաններ են, ինչ մօտ գործ ունին, սըրանցով կարելի է մեծ բան ձեռք բերել»: Ասելն ու սկսելը մին արաւ. սկսեց ինքը նըրանց ուտացնել, խմացնել, նրանց համար մուհտայ ատվախատութիւն անել ու ըտհէնց անելով մեր պարուն Մաթոսը կամաց-կամաց իր միտքը նրանց բաց արաւ: Թէեւ դժուար էր նրանց համար այդ բանը գլուխ բերել, բայց ճար չի կար, վիզ կալան: Էն տարին էլ

<sup>1)</sup> Աշխատում էին: <sup>2)</sup> Ծառայում էր: <sup>3)</sup> Վէճ:

<sup>4)</sup> Քաղաքում:



հօ, ա՛ Թուն, շէնս կամիրան էին գրում, այդ դու գիտես:

— Բա, ոնց չեմ գիտում. էն որ հաչա- սախկալը եկաւ շէնս, սուղիաներին թակեց, ստարշինին տուն գցեց, Եալղշլաղեցի Հասան- բէգին բխովեց <sup>1)</sup> թա գող ա պահում:

— Հա՛, հա՛. ապրես, ըղորմի քո հօրը, հէնց էն տարին: Մեծաւորը երբ եկաւ տնե- րը գրելու, Եղին ու Մինասը, իբրև շինի իշ- խաններ, կանգնեցին, թէ Աւագանք տէրտէ- րի թոռներ են. նրանք պէտք ա ընհաթի շարքէն հանուեն ու ազնուականների շար- քումը գրուեն: Մեծաւորը, Աստուած նրա որդիքը պահի, մի լաւ, հալալ քրիստոնեայ մարդ էր, ասաց, որ միայն իշխանների խօս- քով ես այդպիսի բան չեմ անիլ. թող գիւ- ղացիք բոլորն էլ իրանցից մի պրիգօլօր <sup>2)</sup> տան, թէ իրանք համաձայն են նրանց բէգու- թեանը: Այս որ լսեց Մաթոսը, Եղիի ու Մի- նասի հետ միասին ընկաւ շէնս, որ ոնց որի ա պրիգօլօրը շինի: Մինին խաբելով, միւսին մի գատ տալով, մէկալին վախեցնելով, Մա- թոսը վերջապէս պրիգօլօրը շինեց:

— Խափել ես ասում, բաց թողնում, —

<sup>1)</sup> Շղթալակապ: <sup>2)</sup> Համախօսական:

ընդհատում է նրան Խալփանց Դաւիթը, — ինձ եկաւ ասեց. «Դաւիթ, թուղթ ենք շինում ա- ռաջնորդին ուղարկենք, որ մեր շլօլի համար վարժապետ նշանակի. եկ սրան դու էլ ձեռք քաշի»: Ձեռքը քաշեցի, բայց մի շաբթից յե- տոյ իմացայ բանն ինչումն ա. գլուխ թակե- ցի, բայց էլ ինչ կարող էի անել:

— Դէ էլ գլուխներդ ինչ ցաւացնեմ: — շարունակում է Կարապետը, — դուք ինքներդ էլ գիտէք, որ յետոյ Մաթոսը ուզեց մինչև անգամ շէնս իր վրայ հաստատի. ոնց մենք տանով, խիզանով գնացինք գբռնատի ոտներն ընկանք, լաց եղանք, աղաչեցինք, պաղատե- ցինք, որ մեզ մի կերպ Մաթոսիցն ազատի. Ետնայ գբռնատը ոնց մեր իշխաններին հա- ւաքեց, ուղարկեց քաղաք <sup>1)</sup> սարդարի կուշ- տը, որ գոնեա նա մեզ մի ճար անի: Դէ էլի սարդարն ապրած կենայ, տեսաք, որ նա մեզ եսիրութիւնից ազատեց:

— Բա՛, Աստուած սարդարին հաստատ պա- հի իր թախտի վրայ. նա մեզ Մաթոսից թա- փեց, թէ չէ մենք հիմա վաղ էինք կորել, — պատասխանում է Դաւիթը:

— Ելի մեղայ Մաթոսին, — կրկին շարու-

<sup>1)</sup> Թիֆլիս:



նակում է Կարապետը, — նրանից մի անգամից պրծանք, ականջնիս դինջացաւ, իսկ տեսնում էք, որ Սևուկն Եղին շարունակում է մեր տրաները քանդել ու մեր ծուխը կտրել: Սարին ինչքան խոտ կայ բոլորը մի քանի մարդակերերի ա տուել ու մեզ պէս քեռսիք-քսուքին զրկել. ըտհէնց ա անում և հողերը բաժանելիս, և հանդը ծախելիս, իսկ մենք հայվանի պէս մնում ենք էն կողմին կանգնած: Հիմա էլ էս ա օրս մթնում ա. տեսնում էք նա լիս աշխարհ չի դուրս գալիս, թէ հետը խօսանք, մի բան մասլահաթ անենք. կորած ա, ով ա գիտում որ սև ատակի ա:

— Ո՞նց թա որ սև ատակի ա, — խօսում է Վտրանանց Թունին, — նա հիմա ստարշինի հետ միասին Սարգիս-բէգի ալաչուխում ոչխարի խորովածը գցած լաւ քէֆի վրայ ա: Նա որ քայսօր եօթանասուն տարեկան պառաւ մարդ ա, շէնամիջից դուրս չի գալիս, հազար ու մի կեղտոտ բան ա բռնում ստարշինի ու շինի մեծերի խաթրն առնելու համար, հազար ու մի ուշուկն ու ղէյբաթ <sup>1)</sup> ա լսում գիւղացունց ահից, պատճառ նրա, որ պրիստաւ եկած ժամանակ ոչխարի համ ա տեսնում, սա-

<sup>1)</sup> Բամբասանք:

րին խոտերը կամ հողերը բաժանելիս էլի ոչխար ա ճանգ գցում. կենդ-կենդ էլ, եթէ այդ ձեռուքը գալիս է, շէնամիջի բաղի <sup>2)</sup> ա կուլ տալի ու այդպիսով պորտը հաստացնում, — մի խօսքով այդ մարդը միշտ իր մեռել-կենդանը քաշել ա տալիս միայն լափել ու լակելու համար:

— Ս, նա օձի միս լափի ու զահրումար լակի, բալքի նրան սպանի հա, — զայրացած ասում է Դաւիթը:

— Հրէս եգուց ոնց որի ա էստեղերը կերեայ, — շարունակում է Թունին, — որ շատ էստեղից, էնտեղից սկսեցին նախատել, էլի կը սկսի ինքն իրան հայհոյել ու ասել, թէ մինչև մահս սհէ բանի էլ ես ձեռք չեմ տալ, իսկ եկող տարին մէկ էլ տեսար Եղին կրկին սարը խոտ բաժանելու ա եկել: Ե՛հ հա դրա որն ասեմ, որը խոստովանեմ. դա չէր որ մէկէլ տարին հազար ու մի փանդուփուռնով սուտ պրիգովօր շինեց ու Պողոսանց Զաքարին, որ ստարշին վախտը երեք հազար մանէթ շէնամիջի փող էր կերել, պրծացրեց: Դեռ վերջը, դուք ինքներդ էլ այդ լաւ գիտէք, որ Զաքարը քիչ մնաց Եղիի գլուխը թա-

<sup>2)</sup> Փող:



կի, 13 մանէթ միայն ընկաւ այդ քեօփակի ճանկը: Ահր այդպիսի անաստուածութիւն կը լինի՞. ես տղիս նոքար <sup>1)</sup> տամ, ինքս գնամ հեռու արանումը չոր քարին կրակ անեմ, փող աշխատեմ, որ յետոյ այդ արին քրտինքով աշխատած փողերը Պօղոսանց Ջաքարը տանի իրա համար շահարումը <sup>2)</sup> տներ շինի, իսկ ես մնամ սոված էն ղոլին կանգնած: Ահր էդ Աստուած վեր կուենի, էդ բոլորը Եղիի արարմունքը չի: Ահա, ահա, — դառնում է նա իր փոքրիկ տղային, — գնա մի կուլէն աղբրից ջրով լցրու, բեր խմենք, ծարաւ մեռայ:

— Լաւ էդ խեղճ երեխին ո՛ր ես սարը բերել, միթէ՞ դա բան անող ա, — նկատում է Դաւիթը Թունիին:

— Է՛, տնրշինի մարդ, ինչ ես ասում, — պատասխանում է Թունին, — էս օր էն օրն ա, որ փետին փալաս են փաթաթում ու բանեցնում, նաքի թա երեխին ուր ես բերել:

Միւս օրը վաղ առաւօտեան գիւղացիների մեծամասնութիւնը իր «ղօբօցը» վերջացրած սովորաբար սկսում է խոտի հունձը: Սարն այդ միջոցին մի առանձին կերպարանք է ստանում: Առաւօտեան արեգակը մի նոր կեանք

<sup>1)</sup> Ծառայ: <sup>2)</sup> Քաղաքում:

ու կենդանութիւն է ներշնչում գործունեայ ու եռանդուն շինականին: Սար ու ձոր թընդացնում է նա իր երգերով, «հաղով»: Նրա գերանդիի զընգոցն ու թրընփոցը «ասմանն է» գնում: «Խալիս Ինգլիզ ա, Ինգլիզ <sup>1)</sup>», սրանանը մեռնի, — ասում է նա իր գերանդիի մասին ու շարունակում եռանդով շարժել իր հալալ աշխատանքի այդ անմեղ զէնքը: Թէ բըլուր, թէ ձոր ծածկուած են աշխատաւորների բազմութեամբ: Մի տեղ երեք-չորս ջանաթաթախ ջահիլներ բաւ մտած <sup>2)</sup>, թւեքերը մինչև արմունկները վեր քաշած, ոտքերն ամուր գետնին յեռած ու միաշար կանգնած ամենայն արագութեամբ շարժում են գերանդիները մի աջ, մի ձախ ու ամեն մի շարժումով «աշխարհ են տեղը նստացնում»:

— Նազար, հա, անուշ տափը չի գցես, հէրդ ու մէրդ <sup>3)</sup> խեղճ են. նրանց ճարն ու իլլաջը դու ես, հէնց արա, որ Սողոմոնը առաջ չի ընկնի, — նկատում է նրանցից մինը իր ընկերին:

— Արա, ա Չատ, ինչ ես ասում: Մգամ Նազարը ո՞նց ա մեռել, որ Սողոմոնը նրա

<sup>1)</sup> Անգլիացու շէնք: <sup>2)</sup> Բաւ մտնել — մրցել:

<sup>3)</sup> Հայրդ ու մայրդ:



առաջն ընկնի. էս փափախը գլխիս հարամ չի  
ըլիլ, որ ըտհէ բան պատահի, — պատասխա-  
նում է հպարտութեամբ Նազարը, շարունա-  
կելով եռանդով շարժել գերանդին: — Հ'ը, հ'ը,  
է ջան է քե մատաղ, Ինգլիզ, — անդադար  
կրկնում է նա:

— Նազար, հաւա մի վեր ունի՞ր <sup>1)</sup>, — նը-  
կատում է նրան Սողոմոնը, — Ձատին քեզ աչ-  
քով-ունքով արաւ, ամա դա գատ չի շինիլ:  
Դու տղայ ես, մարդ ու մարդանայ հետս եկ:  
Բա իմ կերածը հարամ չի լինիլ, որ քեզ պէսը  
առաջս կտրի:

— Է՛ս ա հրէս կերեայ, կերեայ, ա՛ Սող,  
մէջ է մտնում Ձատին, — դու ըտհէնց պեծին  
կրակին մի անիր: Դեռ նոր ենք սկսել, ղոչաղ  
ես դուրսը գալիս. հրէս մի սհաթից ետը  
կերեայ, թէ ում մէր տղայ կը բերի: Նազար,  
հա՛ քե մատաղ հա՛, Նազար, Ինգլիզիդ լաւ  
ածոց արա՛, հա՛, աջտն հա՛, ըտհէնց, ապրես,  
— քաջալերում է նա Նազարին:

Ջահիլները շարունակում են եռանդով  
առաջ «գնալ ու իրար չըռելի կրծել»: Արե-  
գակը կամաց-կամաց բարձրանում է հորիզոնի  
վրայ, ձգելով իր սսկեփայլ ճառագայթները

<sup>1)</sup> Մի պարծենալ:

դէպի կանաչազարդ հովիտներն ու մարդագե-  
տինները: Վերջիններս ծածկուած են առաւօ-  
տեան թանձր մառախուղով, որն արեգակի  
ազդեցութեան տակ, մաս-մաս կծկուելով, այս  
կողմն այն կողմն է անհետանում: Զորերի խոր-  
քերից երբեմն-երբեմն լսելի է լինում հովուի  
սրնգի կամ նախրչու պիւլի ձայնը, որը, միա-  
խառնուելով հարիւրաւոր հնչողների աղաղակ-  
ների ու երգեցողութեան հետ, լցնում է օդը  
սքանչելի մեղեդիով:

Քիլիսադարի <sup>1)</sup> առուի ափին նստած է  
մեր ծանօթ Վտրանանց Թունին: Գերանդին  
մի կողմը ձգած, ոտաբոբիկ ու գլխաբաց, նա  
զբաղուած է տրեխ կարկատելով:

— Ա՛ Թուն, հէ ա Թուն, Թունի, — կան-  
չում է նրան ձորի միւս կողմից Բաղունց Կա-  
րապետը:

— Հէյ, թնչ կայ, խէր ըլի, — ձայն է տա-  
լիս Թունին:

— Ո՛նց թա ինչ կայ, — հարցնում է նրան  
զարմացած Կարապետը, — խի՞ ես ըտհէնց ան-  
մեղացել. մաջալ <sup>2)</sup> ես գտել, որ նստել ես  
տրեխ կարկատում, էս օր որ օր ա՛: Ընկեր  
ես, դու էլ ինչ պէս բաժնիցը մաղբուն ես

<sup>1)</sup> Եկեղեցաձոր: <sup>2)</sup> Ժամանակ:



մնացել, եկ գնանք խոտ բաժանողի ետևիցը կախ լինենք, աչքը հանենք ու խոտ պոկենք նրանից: Բա չուայ որ օր պտի նա մեր արիւնը ծծիլ, մենք խի իսան չենք:

— Արա՛, Կարապետ, գիժ չես, պել չես, եկ ինձ լսիր, էդ ղալմաղալէն հեռու կաց: Սևուկն Եղին մեզ խոտ չի տալ նհախ տեղայ մեր մեռելներն էլ քաշիլ կը տանք, էդ կը լինի մեր աշխատանքը:

— Ո՞վ ա ասում, թա մեռելները քաշիլ կը տանք. դու վեր կաց, չեմ-չեմ մի անիր, տրեխներդ կեց: Էսօր որ ես արին չանեմ, մգամ սիրտս կը հովանայ, — պատասխանում է բարկութեամբ Կարապետը ու շարունակում շտապեցնել Թունիին: Խեղճ Թունին ճարը կտրած տրեխները մի հանգաւ ոտներն է գցում ու Կարապետի հետ ճանապարհ է ընկնում գէպի Գեօլի ղրաղը, որտեղ այդ առաւօտ «լիս աշխարհ» է դուրս եկել Սևուկն Եղին: Գեօլի ղրաղին անբաւականների մի մեծ խումբ շրջապատել է Եղի ամուկ: Վերջինս գլխաբաց, փափախը կռնատակին դրած, կաշուէ բռնոթամանը ձեռքին վիթխարի սեան պէս կանգնած է նրանց մէջ: Բոլորն էլ ձրգձգում են նրա շորերը, բոլորն էլ խոտ ու բաժին են պահանջում: Խեղճ Եղի ամին էլ

չի իմանում, որին պատասխանի, որին «քարսազի»<sup>1)</sup> անի. բայց նա այդպիսի ղալմաղալներում այնքան փորձուած է, այնքան ընկած-դուրս եկած մարդ է, որ ոչ թէ միայն գլուխ չի կորցնում, այլ դեռ «ըռելս էլ է ճղում»: Գիւղացիք տաքացած սաստիկ բարձրաձէնում են, բայց Եղի ամին նրանց գերազանցում է: Կարելի է ասել, որ նա շնորհիւ իր այդ ընդունակութեան է այնպիսի նշանաւոր դեր խաղում Կաթնաշէնցոց «չէնամիջի» գործերում: Նրա ձայնը անհամեմատ հեռու է գնում: Հնձողները, հեռուից լսելով Եղի ամուկ որոտոցը, երբեմն ասում են՝ «չոռ, չոռ ա՛ Եղ, ըշտա երբ պիտի քո ձայնը այս սարէն կտրուիլ»: Բայց, չը նայելով գիւղացոց այդ չոռ ու ցաւին, իւրաքանչիւր տարի այդ ժամանակ Եղի ամուկ հզօր ձայն էլի իւր նախկին վեհութեամբ «դրմբում է» Գեօլի ղրաղին: Տարուայ ընթացքում Եղի ամին շէնամիջում շատ է ղալմաղալի ճանկ ընկնում, շատ է սրա, նրա հետ «դաւի-դրաբայ» անում, բայց երբէք նա այնքան «բողազ չի ճղում», որքան խոտերի ժամանակ սարին:

— Ախպերք, դուք ինձանից ինչ էք ուզում,

<sup>1)</sup> Բաւականութիւն տայ:



— ասում է նա գիւղացիներին, — ես էլ ձեզ պէս մի ըռհաթ մարդ ըստեղ իմ քեասիբուծիւնին եմ եկել. գանգատ ունէք, պնացէք ձեր ստարշինին արէք, ձեր սուղիին ասացէք: Եկել էք, պկիս չոքել, ուզում էք հոգիս առնել. եա կամ թնչ իրաւունքի տէր եմ ես, որ ձեզ քարսազի անեմ: Ոնց մեծը նշանց է տալիս, ես ընհէնց եմ բան բռնում, ընհէնց եմ բաժին անում: Մեծի խօսքէն դուրս չեմ գալիս. ստարշինն ասում ա. «ա՛յ Եղ, էս բանն էսհէնց արա՛», ես էլ վեր եմ ունում նրա ըսածին անում: Դէ հմի դուք թնչ էք երեսս կտրել. թնչ էք հոգիս բողազս հւաքել:

— Հա՛ ես էդ անմեղ ջանիդ մատաղ, — հեգնութեամբ նկատում է նրան Բաղունց Կարապետը, — մեծի խօսքաւն ես գնում: Լաւ մեծը քեզ թաղի, մեծը քեզ ասել ա, թա գնա՛ բոլոր խոտերը շէնամիջի դուրգերին տուր ու խեղճ, անճար, անիլլաջ ըռհատին մաղբուն արա՛: Խի՛ չես հանգին բան բռնում, խի՛ չես մեզ հետ էլ մասլահաթ անում:

— Խնչ, թնչ. քեզ հետ մասլահաթ անեմ, քեզ հետ. շէնա խի քանդուել ա, էլ մարդ չի կայ:

— Բա՛ ո՛ւմ հետ անես. եկ ինձ հարցրու, գնա Խալփանց Դաւթին հարցրու: Էն խի բա

խարջը վեր դնելիս լոխից առաջ՝ մեզ պէս քեասիբներին ես վեր գնում, պրիստաւ եկած ժամանակ զազախին իր ձիով իմ տունս ես ղոնաղ տալիս: Որ սովիստաւ բան բռնէիր, էսօր Սարգիս-բէգի թուրքերը խեղճ Դաւթին թակիլ-կտրատիլ չէին, նրա գլուխն ու շորերը պատռոտիլ չէին:

— Հա հլէ սպանած պտին, — պատասխանում է Եղի ամին, — նա խի ա գնում Յուրտ աղբրի ձորը, քանի որ ընտեղ բաժին չունի: Որ հախը հարցանես, նա իսկի մի ծեղ էլա չը պիտի ստանայ էս սարէն. նա քանի գըլխանի ա, որ գնում ա Սարգիս-բէգի մարդկանց հետ հուլաթ <sup>1)</sup> անում:

— Ո՛նց չի պիտի մի ծեղ էլա ստանալ, տնաքանդ, — երեսը արնաթաթախ ու պատռոտած շորերով առաջ է դուրս գալիս Խալփանց Դաւթը, — խի՛ ես թագաւորի ըռհաթ չեմ, ես թագաւորին խարջ չեմ տալի: Ա՛ խալիւր, — դառնում է նա գիւղացիներին, — բա էս Աստուած վեր կունի, էս տեսնուած ու լսուած բան ա՛, ձիւն ձմեռուանիս Յիրալօվի հանդին սոված-ծարաւ անծող եմ արել, վայ էն հալին քսան մանէթ սաղացրել ու

<sup>1)</sup> Վիճում:



խարջս տուել: Հեռու ամառ էլ էս քեօփակն ու ստարշինը եկան պկիս չոքեցին, թա ըլիլ չի, որ պէտք ա հէնց հիմա խարջը տաս ու տաս. աղաչեցի պաղատեցի, որ մի քիչ ժամանակ տան, տեսնամ ինչ հողն եմ գլխիս տալի,—գատ չի դառաւ. ճարս կտրեց, իմ աչքի լիս Ջէյրան կովը հէնց էս քեօփակի վրայ կիսագնով ծախեցի ու խարջս տուայ, հմի Սևուհից Եղին ասում ա, թա դեռ սպանած պտին:

Սպանած պտին մի տակաւը, մին գլխաւը, կրկնում է զայրացած Եղի ամին,—ես քեզ Յուրտ աղբրի ձոր եմ նշանց տուել, որ գնցել ես ընտեղ խոտ հնձելով, հը:

—Բա ինչ ես արել, բա ինչ ես արել. էս ինչ ա,—ցոյց է տալիս Եղի ամուն ծեղը, բաժանաթուղթը,—էս ինչ ես ձեռիս դրել: Ծեղումը Յուրտ աղբրի ճանպի տակը մեր բաժնի վրայ ես դնում, ճանպի գլխի ձորամիջի կատաղած խոտերը քո գիտացած մարդկանցը տալիս ու յետոյ նրանց սովրցնում, որ գան գլուխներս թակեն ու ճանպի տակն էլ ձեռներիցս խլեն:

—Սուտ ա, խաշաւ աւետարանաւ որդիմ կուտեմ, որ սուտ ա. ճնպի տակն էլ, գլուխն

էլ նրանց ա տուած, աչքերս կապիր մի,—ասում է Եղի ամին:

—Ո՞նց ա սուտ. ես չեմ գիր գիտում, տէր-Պետրոսի տղէն էլ չի գիտում, նա չի երեկ կշտրներիս կարգաց: Դէ հմի էլ հագուը հրէս Արշակն ա ըստեղ, թող սա էլ կարգայ —ասում է Դաւիթը, դուրս քաշելով խմբից Արշակին:

—Արշակ, կարգա՛, Արշակ, կարգա՛, —ձայն են տալիս այս ու այն կողմից գիւղացիները:

Արշակը վերցնում է բաժանաթուղթը. «Սղաջանի տափերը,—կարդում է նա,—Այ. թալէն, Փխակի աղբիւրը, Կէնդ-գումի ձորի բողազը, Հանէսի տղի խմհատը, Բարսեղի իւր. դը, Վանուհնց ծըրհափան հողի նիւնիլի ըռեւելը, Քիքունց խմհատի դուրս գցիլի ըռեւելը, դէնը հարերդայ չուայ Թրոսանց երկու. թեւի ներքի եզնածիւրը, Սերոբի կլատեղը ու ընտղա բռնած չուա Սահակի խոթարքը, Յուրտ աղբրի ճնպի տակը...»:

—Ճնպի տակը, ճնպի տակը,—կրկնում են գիւղացիները, ընդհատելով Արշակի ընթերցանութիւնը: Բաղունց Կարապետը բարկացած մօտենում է Եղիին:

—Ա՛, քեօփակ, դու մեր տները խի՞ ես քանդում,—ասում է նա,—մեզ քսան տանով



Կալի հողումն ես մաղբուն արել, ըստեղ էլ էս խեղճին երեսուն տան հետ ես գցել ու ոչ թա մենակ առանց խոտ թող արել, այլ դեռ թակիլ էլ տուել: Ծեղումը մի բան ես գրում, Սարգիս-բէգի թուրքերին ուրիշ բան սովորացնում ու գալիս մեր կշտին էլ դամ-միշ <sup>1)</sup> ըլում, թա տեղովը սուտ ա. բա քեզ Աստուած չունիս, բա էն կապիտիցն <sup>2)</sup> էլա վախում չէս:

— Ատա՛ կապիտը քու գլխին փուլ գայ, — բարկացած գոռում է Եղի ամին, — նա խի էր ճնպի տակը գնում, որ թակուլի: Էն եքայ աշխարհը դրանց բաժնումը, դա կարաց ոչ ուրիշ տեղ վեր ունի:

— Ահր էն եքայ աշխարհը երեսուն տան ես տուել, մենակ նրանը չի: Էլ ախիրը նրա պէս մի խեղճը ճնպի տակը չը պիտի գնար, էլ ախիրը նրա պէս մի խեղճը թակուլի չի պտէր: Ի՛նչ թըռնո՞ւնք անի, որ դու Սարգիս բէգի թուրքերին ասում ես. «Ծեղումը ճնպի տակը նրանց եմ տուել, ամա ով գայ, տաղ արած <sup>3)</sup> գլուխը թակեցէք. Յուրտ աղբրի ձորը հարերդա Սարգիս-բէգինն ու ստարշինն ա»:

<sup>1)</sup> Ուրանում: <sup>2)</sup> Երկնքից: <sup>3)</sup> Սուս կացած:

— Ատա թուրքերը դեռ քեզ էլ պտին թակած, քեզ. էդ քնչ ես խօսում. ո՛ւմ վրայ ես ըռեխ բաց անում: Դեռ եկ ձեռքս պաչի, որ քեզ Կալի հողն եմ ուղարկել:

— Ո՛ւմ ձեռ պաչեմ. քու ձեռը: Դու ոչ ըլես, ո՛չ, դու մեր շինէն իքի բաշը <sup>1)</sup> վերանաս. քու անունը միանգամից Աստուածանից կտրուի, քու:

— Ամէն, — վրայ են բերում գիւղացիները:

— Ամէն ցաւա գաք դուք, — բարկացած դառնում է դէպի նրանց Եղի ամին, — դեռ ամէն էլ ասում էք. էդա ձեր շնորհակալութիւնը: Ես տարին բութիւն ձեզ համար պրիստաւի, նաչալնիկի ու մրովի սուգի դռներն ընկնեմ, գբռնատի ու ակոթնի սուգի առաջին չքոք անեմ, յօգուտ հասարակաց երբեմն գլուխս թակել տամ, ետնայ դուք ինձ ըտհէնց էլ ասէք:

— Ա՛յ ոչ ընկնես, փուչ ընկնես, — խօսում է Վարանանց Թունին. — Խի՞ ես ընկնում, քեզ ով ա խնդրում, թա սրա-նրա դռներն ընկի: Որ դու ըլես ոչ մեր շէնը կը գինջանայ, քեասիբի բեռը կը թեթևանայ.

<sup>1)</sup> Յաւիտեանս:



լաւ խեղճ ըռհաթի տունը դու չես քանդում, հը՞:

— Այ իմ խէվ խելքէն, իմ խէվ խելքէն, որ ձեզ հետի քաշքաշ եմ ըլում: Էս էլ մի զալաթ էր, որ այս տարի արի, Սարգիս բէգի ու ստարշինի խաթրը չը կոտրեցի: Ես խի ձեզ հետի խոտ բաժանեմ, խի հանդ բաժանեմ, խի մեծաւորների դռներն ընկնեմ: Ախպերք, բոլ էր, հերիք էր. օր էս ետը դուք ձեր եարին <sup>1)</sup> դարման արէք. հօ, հօ. ես էլ շէնամէջ չեմ կոխիլ, եախէս իբի բաշը ձեզանից թափում եմ, եախկ, — ասում է Եղի ամին ու թքոտելով հեռանում գիւղացիներից:

Վերջիններս այս այն կողմն են ցրում: Նրանք դարձեալ անբաւական են: Եղի ամուսնու փառաւոր հրաժարականը նրանց չուրախացրեց. այդ խօսքերը Եղի ամուսնու նրանք առաջին անգամը չեն լսում: Եղի ամին տարուայ ընթացքում մի քանի անգամ թքոտում է ու զգուշանալով «եախկ» անում, բայց էլի սլիստաւ եկած ժամանակը «ձեռաց աղի առաջին բռնում է» իբրեւ շինի իշխան, ու այդպիսով միամիտ տրեխաւորի կապը երբէք նրա ձեռքից չի ընկնում, էլի թէ խոտ, թէ հանդ

<sup>1)</sup> Վերջին:

Եղի ամուսնու ձեռքովն է անց կենում, էլի ամեն բանում նրա մատը խառն է լինում:

Օրը շաբաթ է: Գիւղացիներից շատերը վերջացրել են խոտի հունձը, շատերը դեռ կիսել էլ չեն, նայած Եղի ամին ում ինչ բաժին է տուել: Իրիկնադէմին սարի ճանապարհը «ղլղլում է», թէ մեծ, թէ փոքր իրանց «ալուխ-չուլուխը» հաւաքած շտապում են տուն: Խոտ բարձած ձիաների ու ջորիների ու քարաւանների վերջ չը կայ: Չը նայած որ գիւղացին միշտ մեծ սիրով ու խնամքով է վերաբերում դէպի իւր ամենահաւատարիմ օգնականը, անասունը, բայց այդ օրը նա ուշ չէ դարձնում նրա ծանր բեռան, շտապեցնում է. ծեծում է մինչև անգամ խեղճին, որպէս զի «հրէտին ժամին վրայ հասնի, հրէտին Լուսաւորչի պատկերի առաջին լիս կայցնի <sup>1)</sup> ու հրէտին խաչ-աւետարան համբուրի»:

Օրհնելի սուի <sup>2)</sup> զառիվայրում ջորուն խոտ բարձած, գերանդին ուսին դրած, գլուխը քաշ դցած դանդաղ քայլերով գնում է ջորու ետեւից մեր ծանօթ Խալիֆանց Դաւիթը: Եր-

<sup>1)</sup> Մոմ վառի:

<sup>2)</sup> Սեռ-լեռնադագաթ:



բեմն-երբեմն միայն բարձրացնում է գլուխը, «թոշ» անում ջորուն ու կրկին, ընկղմուկելով իր մտքերի մէջ, շարունակում լուռ ու մունջ քայլել: Նրա ետեւից ոչ այնքան հեռու մի փայտ ձեռքին, մի ինչ որ եղանակ շվշուացնելով, բոլորովին մենակ գնում տիրացու Արշակը. նկատելով Դաւթին, նա աւելացնում է քայլերը:

— Բարի երեկոյ, Դաւիթ ամի, — ասում է Արշակը, հասնելով նրան:

— Ա՛յ Աստուծու բարին քեզ, — պատասխանում է Դաւիթը:

— Հը խոտ շատ հնձեցի՞ր:

— Ե՛, որտեղից հնձեցի, տնաշէն: Էն օրը հու դու ինքդ տեսար, ինչ հալի էի ես. ջարդուած, կտրատուած սաղ օրը էլ կարացի ոչ մատս բանի նի տամ: Էքսի օրը վայ էն հալին գնացի Այթալէն. էնտեղ սրա, նրա աղաչանք անելով կէնդ երկու բեռը խոտ հաւաքեցի:

— Երկու բեռը՞, — հարցնում է զարմացմամբ Արշակը:

— Երկու բեռը, հա. մինն երէկի եմ տուն տարել, մինն էլ էս ա հմի եմ տանում:

— Բա ձմեռս առանց խոտի էդ ո՞նց պըտես անի՞լ:

— Ոնց թա ոնց պտիմ անիլ. մի ջորի ունիմ, մնէլ մի կով. ընէլ Սևունց Եղին կիսագնով ծախել կտայ ու ետես կը թափի նըրանցից, ոնց պտեմ անիլ, ա՛ քե մատաղ, — պատասխանում է Դաւիթը ու կրկին լուռ թեան մէջ ընկղմւում: — Թո՛շ, թո՛շ, — երբեմն միայն ձայն է տալիս նա:









## Մ Ե Ր Տ Է Ր Ը

Աստուած մեր տէրին հաստատ պահի իր ժողովրդի համար, երկար կեանք ու փառաւոր օրեր տալ նրան: Նա որ կալ—ինքը Մովսէս մարգարէն ա. բոյը երկար, թիկունքը լայն, միրուքը մինչև գօտին է հասնում, իսկ մազերը ծալ-ծալ իջնում են ու նստում ուսերի վրայ. լիքը լրկւելում է <sup>1)</sup>), զնալիս մի աջ, մի ձախ է թեքւում, յետևից նայելիս այնպէս է թւում, թէ բոլոր ժամանակ «խաղաղութիւն ամենեցուն» ասելով օրհնում է չորս կողմի ժողովրդին: Երկար գաւազանը ձեռքին, սաղաւարտանման մորթէ փափաքը գլխին մեր տէրը երբ աչքիդ առաջն է դուրս գալիս, կարծում ես թէ ինքը Լուսաւորիչն ա Խորվիրապից դառնում. փափաքը վերցնում ես կռան տակիդ դնում, ձեռքերդ կրծքիդ խաչ անում, մօտենում առաջին թեքւում ու

<sup>1)</sup> Տատանւում է:



«օրհնեա, տէր» ասում. «Աստուած օրհնի, որդի ջան», պատասխանում է տէրը ու մի պահ պանիչ կարդում գլխիդ: Մեր տէրը այն ուսումնական շլապկաւոր քահանաների նման մինչև կէս օր քուն չի լինում. վաղ առաւօտեան, մինչև տաւարը հանդը գնալը, նա արդէն ոտի վրայ անգիր աղօթքներ է կարդում, կամ ինքն իրան շարականներ երգում: Ժամկոչը հէնց որ բռնում է զանգակի թելը, տէրըն արդէն սրան-նրան «Աստուած օրհնի ասելով» եկեղեցու շէմքին է մօտենում: Առաւօտեան ժամն ասելուց յետոյ տէրը եկեղեցուց դուրս է գալիս գիւղը շրջելու, մեզ, իր զաւակներին, ակը տալու: Մինի վրայ բարկանում է, որ հրետին բանի գնայ, միւսին մի երկու գաւազանով խփում է, երբ դեռ մրափած է տեսնում, փոքրերին խրատում է, որ ծնողաց հնազանդ կենան, ինչ բանի նրանք ուղարկում են, անտրտունջ գնան, աշխատաւորին խրախուսում է ու օրհնելով ճանապարհ գցում դէպի դաշտը, — մի խօսքով տէրը ամբողջ գիւղը պտրտում է, համարեա ամեն տուն մտնում է ու մի բարի խորհուրդ տալի կամ մի քաղցր խօսք ասում: Նատ անգամ պատահում է, որ տէրը ոչ թէ մինչև կէսօր, այլ մինչև երեկոյ էլ իրանց տան երեսը չի տեսնում:

— Ատա իսկի տեսնում ա ի՞նչ անի, իրենց տունը որն է, մեր տունը որը: Նա մեր տէրն ա, մեր տներն էլ, մեր ունեցած չունեցածն էլ նրանն ա: Ի՛նչ կարելի ա, որ մենք տէրին ամբողջ օրը սոված թողնենք, չէ, հայ քրիստոնեայի աղաթում այդ չը կայ. այն տունն ու նրա միջի օջաղը նզովեալ է, ուր տէրը մի բան չը ճաշակի, օրհնութեան բաժակ չը խմի. մի տեղ մի բաժակ արաղ է, միւս տեղ մի քեաշի գինի, մի այլ տեղ մի կտոր պանիր-հաց է կամ պասուկ մի որ և է չոր ու ցամաք կերակուր: Տէրն ամեն տեղ օրհնում է իր զաւակներին ու ինչ որ տալիս են, բաւական ա մնում, մինին հազար խնդրելով Աստծուց տան տիրոջ համար, ու դուրս գնում: Պատահում են օրեր, որ տէրը այս կամ այնտեղ ճոխ սուփրի է պատահում, մի բաժակ արաղով ու պանիր-հացով փոր չի կըշտանալ. այդպիսի դէպքերում բոլորը ոտի են կանգնում ու տէրին ամենապատուաւոր տեղը նստացնում. երբ տէրը նստում է, այն ժամանակ սուփրի տէրը նա է, միւս բոլորը նրա խոնարհ ծառաներն են. Մեր տէրը սովորութիւն չունի ուսումնականների նման մերժել ուրիշի աղ ու հացը. նրանց, երբ ասում ես պատահած ժամանակ, «վարժապետ, կամ՝ ա՛



տէր, եթէ տէրտէր է, համեցէք, համեցէք, ո՛ր էք գնում»։ ասում են՝ «չէ, չէ, շնորհակալ ենք, մենք քելեխ չենք ուտում», կարծում են թէ հէնց ամեն սուփրի վրայ հոգեհաց ա փռած, որի հետ նրանք առհասարակ չունին։ Ասենք Աստուած նրանց բարի տայ, որ ամեն ժամանակ սուփրի չեն մօտենում. ուսումնական մարդիկ են, պէտք ա լաւ պատիւ տաս, հաւ ա, ճիւ ա պիտի մորթես, եղըր-մեղըր պիտի ուտացնես. թէ չէ ուրիշ կոշտ ու կոպիտ բաներից մէկ էլ տեսար հիւանդացան, շօշն առանց վարժապետի մնաց, եկեղեցին առանց տէրտէրի։ Ես ու էն կը հարցնեն, թէ այդ ինչ է պատահել, որ վարժապետն ու տէրտէրը հիւանդացել են. կասեն, որ այս ինչ ախմախի տանը լօբի ու շըլըփլաւ են ուտացրել, նրանից են հիւանդացել, — դէ արի այն ժամանակ էշը փխակիցը հանի։ Այն ինչ մեր տէրի առաջին դիր, ինչ որ ուզում ես. մեր երկրում ծնուած, մեր երկրում մեծացած մարդ է. մօխոխ, լօբի, կոնչոլ, խաշու, բոխ, շուշան, — բոլորը նրա համար եղը ու մեղըն է. «այս բանը ես չեմ ուտում, կամ այս բանը ես չեմ սիրում», նրանից երբէք չես լսիլ։ Միայն մի բանի մեր տէրն աչքով աչք չունի նայելու — այդ էգի

միսն է, որին նա իրան Աստծուն նուիրելուց յետոյ մատով անգամ չի դիպչում. այդ պատճառով երբ մսեղէն կերակուր դնես տէրի առաջին, միշտ կը հարցնի՝ «Եգ ա, թա՛ վերց»։<sup>1)</sup> «Վերց ա, ա տէր, վերց, կարգիդ մատաղ, կեր ու փառաւորվի՛ր», պատասխանում ես. տէրը ճաշակում է ու օրհնում քեզ։

Մի անգամ, չեմ իմանում ում տանն էր, ժամահացի միջոցին, երբ խաշուն բերան, տէրը սովորաբար հարցրեց՝ «Եգ ա՛, թա՛ վերց»։ Մուսունց Մնացական ապէրը, որը նստած էր տէրի դիմաց, իր սովորական զուարճախօսութեամբ պատասխանեց. «Հա՛, Էգ ա՛, Էգ ա՛, կեր բալքի՛ <sup>2)</sup> քեզ սպանի»։ Տէրը, սովոր լինելով Մնացական սպօր հանաքներին, միայն բարձրաձայն ծիծաղեց. այն ինչուսումնական տէրտէրը ով ա իմանում այդպիսի հանաքի պատճառով ինչ զալմաղալ բարձրացնէր ու հացը գլխներիս հարամ անէր։

Ճշմարիտն ասած Մնացական ապէրը տէրի հետ այնքան էլ չունի։ Ի՞նչ արած. նրան ներելի է, մեծ մարդ ա, պառաւել ա ու խելքից ընկել։ Գուցէ կարծում ա, որ ինքն իբրեւ մահտեսի տէրից բարձրն ա. ինքը Երուսաղէմ

1) Երու։ 2) Գուցէ։



ա գնացել, տէրը ոչ. ինքը չոք-չոք գետինը լիզելով Քրիստոսի գերեզմանին ա մօտեցել, տէրը ոչ. բա այն էլ իմանում ա Մնացական ապէրը, որ տէրը Հայրիկ կաթողիկոսի աջն առել ա, ինքը ոչ. տէրը սուրբազանների հետ մի սուփրի նստում է, ինքը ոչ. է՛, որն ասեմ. Մնացական ապէրը ամեն կերպ աշխատում է տէրի պատիւը գցել, բայց այդ նրան չի աջողվում: Ասում ան, մի անգամ, երբ դեռ տէրը գոմերում տաւար էր պահում, գալիս է տուն գոմերը հաց տանելու: Մայրը տանը չի լինում. տէրը դէս է ընկնում, դէն է ընկնում, մի ուտելու բան չի գտնում, մտածում է ձուածեղ անել. մառանի կողքէքը կոտրում է, ներս մտնում, փափախը ձուաներով լցնում, որ մինչև մօր գալն իր բանը տեսնի: Հակառակի պէս մայրը այդ ընկնին գալիս է ու տէրին մառանումը տեսնում: Ոնց անի, ոնց չանի, որ մօր քօթակից աղատուի, տէրը փափախը ձուաներով գլխին է դնում ու համարձակ մօր առաջը դուրս գալիս: Մայրը, տեսնելով նրան մառանում, սաստիկ բարկանում է ու երկու ձեռքով տէրի գլխին բանփում. ձուաները կոտրատվում են ու տէրի գլուխը մլուխը ու թուշերը նախշում:

Մի ուրիշ անգամ, պատմում է Մնացա-

կան ապերը, հայրը գոմերից ուղարկում է տէրին տուն իր մուշտակի ետևից: Տէրը մուշտակը ուսին դրած գոմերը դառնալիս ճանապարհին սաստիկ յոգնում է. առանց երկար ու բարակ մտածելու վերցնում է մուշտակը իր ուսերից ու իրանց ահագին Քօնթի շան մէջքին բարձում, այնպէս որ շունը կորչում է մուշտակի մէջ. այդ դեռ բաւական չի, հացի տոպրակն էլ պնդացնում է մուշտակից, լաւ կապկպելով նրան: Հէնց որ տէրն ու Քօնթին գոմերն են հասնում, այնտեղի շները, իրանց բարեկամ Քօնթին մուշտակի մէջ չը ճանաչելով ու նրան մի օտարօտի գազանի տեղ ընդունելով, կատաղաբար յարձակում են վրան ու սկսում է սարսափելի քօլօլ: Տէրը ձեռքի մհակով սկսում է նի պրանել շներին, բայց ոչինչ չի կարողանում շներել. շները մուշտակը մաս մաս են պատառոտում ու տոպրակի հացը մաքրազարդում. խեղճ Քօնթին էլ հազիւ է նրանց ատամներից պրծնում:

Այս դեռ բաւական չէ, Մնացական ապօրը որ լսես պատրաստ է օր ու գիշեր տէրի կեանքից հազար ու մի խայտառակ բան պատմել: Քուրքի լուրը գոմերը հասաւ, ուր գտնւում էր այդ ժամանակ տէր հայրը: Տաւա-



բաժնեւրից մինը, գալով գիւղը, յատուկ գնաց տէրի մօտ ու ասաց. «*ա՛ տուն կրակ ընկած, հրետին փախի դադագիւն ընկի*<sup>1)</sup> թէ չէ հայրըդ գալու ա քեզ սպանի»: Տէրը հէնց այդպիսի մի բանի էր սպասում, որ թողնի տուն ու տեղ ու դադարգիւն ընկնի. իրա գնալու տեղը նա վաղուց գիտէր: Հօր գալու լուրն առնելով, նա հետեւեալ օրը վաղ առաւօտեան վեր կացաւ, մի հաց աղլուխում փաթածեց, մէջքին կապեց և գնաց: Նա փախաւ, գնաց Ծաղկոց անապատը այնտեղ հռչակաւոր Յովհաննէս հայր սուրբի մօտ կարգալու ու դըպրութիւն սովորելու, որ վերջը քահանայ դառնայ: Ծնողները մի երկու շաբթից յետոյ իմացան ուր ա փախել տէրը, բայց ետեւից չը գնացին. աւելի լաւ համարեցին թողնել այնտեղ, քանի որ նա տանը աւելի վնաս էր տալիս, քան օգուտ: Անապատումն էլ, Մնացական ապօր ասելով, նա շատ բան չը շինեց. գրաբարի հոտը վայ էն հալին առաւ, իսկ «այիբ-բէնից» և առհասարակ կարգաւ գրելուց բոքիկ մնաց: Նրա սովորած գրաբարն էլ Աստուած ինքը գրաբար համարի: Խեղճ հայր սուրբը շատ աշխատեց, ամա տէրը էլի այն

<sup>1)</sup> Կորիւր:

տաւարածը մնաց: Մի անգամ սրբազանը Ծաղկոց հիւր է գալիս: Հայր սուրբը տէրին նրա մօտ սպասաւոր է նշանակում: Մի քանի օրից յետոյ վանքից հեռանալիս ի միջի այլոց ասում է հայր սուրբին. «Յովհաննէս հայր սուրբ, գիտեմ, որ փոքրաւորիդ քահանայութեան համար ես պատրաստում. նա բաւականին համեստ ու խոնարհ է, բայց դեռ շատ գռեհիկ է, աշխատիր նրա լեզուն փոքր ինչ կոտրել, զրոց լեզուի հետ ծանօթացրու»: Սրբազանի գնալուց յետոյ հայր սուրբը սաստիկ յանդիմանում է տէրին ու խստիւ պատուիրում, որ նա իրա, հայր սուրբի հետ, միշտ գրաբար խօսայ: «Ծառայ եմ կամքիդ, հայր սուրբ», պատասխանում է տէրը և ըսկըսում է այնուհետեւ հայր սուրբի հետ գրաբար կոտրատել: Բայց շուտով պատահում է մի դէպք, որը վերջ է դնում գրաբարի յաճախ գործածութեան: Մի օր վաղ առաւօտեան դեռ մութը պատած տէրն ըստ սովորականին գնում է մօտակայ անտառը շալակով փայտ բերելու: Վանքի պարսպից դեռ մի քանի քայլ չը հեռացած, մօտակայ ժայռի վրայ մի ինչ որ բան է նկատում, մօտենում է և ինչ է տեսնում — հայր սուրբի սիրելի աւանակի արիւնշաղախ ոսկորներն այս



ու այն կողմը ցրուած. Տէր, մեղայ քեզ Աստուած. սա քնչ բան է, տէրամեռ գայլն այս քնչ է արել», — բացականչում է տէրը ու հարա տալով դէպի վանքը վազում: Հայր սուրբը տէրի այլայլուած դէմքը տեսնելով, հարցնում է շտապով. «Հօր, ինչ է պատահել, որդի ջան, ասա»: Տէրը այդ նեղ սհաթին էլի գրաբարով է խօսում: «Հայր սուրբ, — զլեռնային ծաղկակոխը <sup>1)</sup> ի գիշերէ այսմիկ եկեալ ու ի վերայ ժայռի պստռեալ ու մաքրազարթեալ է զօրովայնը մոխրաթաւալի <sup>2)</sup> մերոյ»: — «Ա. որդի, քնչ, քնչ. — ասում է հայր սուրբը, — շիտակ ասա, չեմ հասկանում»: Տէրը ձեռաց աշխարհաբարի է փոխում ու պատասխանում. «դէ Դնց շիտակ ասեմ, հայր սուրբ. գիշերիս գայլը եկել ա ու մեր իշի թափանմափանը <sup>3)</sup> ցրիւ տուել»: Հայր սուրբը սաստիկ բարկանում է տէրի վրայ, որ նա երեկոյան էշին տխուրատանը չի կապել, զայլապա՞ ճանիծում է ու ասում. «շուն անիծած, եթէ այսուհետեւ էլ դու ինձ այդպիսի գրաբար խաբարներ պիտի բերես, հրետին իմ անապատից քո փասափուսէն քաշի <sup>4)</sup>»: Տէրը

<sup>1)</sup> Գայլը: <sup>2)</sup> Էշի: <sup>3)</sup> Փորը, ստամոքսը:  
<sup>4)</sup> Գնա՛, կորիր:

ծնկաչոք թողութիւն է խնդրում: Բարեսիրտ հայր սուրբը ներում է: Եւ շատ դժուար էր նրա համար իր փոքրաւորին թերուս դուրս առնել վանքից. տէրը լաւիտեան տգէտ կը մնար. էս ու էն կը հարցնէին, գուցէ և հէնց ինքը սրբազանը, այս քահանայացուն համ աշակերտն է. — Յովհաննէս հայր սուրբի: «Է՛, ծերացել է Յովհաննէս հայր սուրբը, կասէր սրբազանը. նրա փոքրաւորներն առաջ շատ հմուտ ու բանիմաց էին, իսկ այժմս անտաշ ու թերուս են»: Վերջ իվերջոյ խեղճ հայր սուրբը սև երես կը մնար: ձար չը կար, հայր սուրբը վճռեց դարձեալ տէրին թողնել իր մօտ ու շարունակել նրա կրթութիւնը: Շատ աշխատեց հայր սուրբը, ամա տէրը գրելկարդալը մի շիտակ չը մարսեց: (Մի էդ Մնացական ապօրը հարցնող ըլի, թէ ինքը Յովհաննէս հայր սուրբը իւր ամբողջ կեանքումը գրելկարդալը մարսել է, որ նրա աշակերտը մարսի): ձարը կտրած հայր սուրբը «այլբէնարանը» թողեց ու սկսեց տէրին անգիր աղօթքներ, շարականներ, սաղմոս ու մինչև անգամ աւետարան սովբեցնել: Այդպէս մի քանի տարի անցաւ մինչև որ տէրի միրուքն եկաւ կրծքի վրայ նստեց: Այդ միջոցին տէր-Մինասը վախճանուեց: Գիւղիս իշխանները



Ժողովրդի կողմից մի խնդիրք ուղարկեցին սըրբազանին, որ նա տէրին ձեռնադրի: Սրբազանը պատասխանեց, որ մի ուրիշ ուսումնական քահանայացու ունի, նրան է ուղղւո՞ւմ ձեռնադրել ու մեր գիւղն ուղարկել: Իշխաններն այս որ լսեցին բոլորն էլ գնացին քաղաք սըրբազանի մօտ. նրա խաթրն առնելու համար մի քանի հաց մեղր, կարագ, մի մոթալ պանիր, մի վայրենի այծ ու բախրա <sup>1)</sup> սպանած տարան իրանց հետ: Երբ իշխաններին ընդունում է սրբազանը, նրանց մէջից դուրս է գալիս Բալուսն Սալին ու ասում. «սուրբազան հայր, թա մեր Առուշանին տէր ես շինում, շինի, թա ու չէ էլ ուրիշ երէց չենք թողնիլ, որ մեր շէնը մտնի. էլ ոչ պըտարագ կանենք, ոչ ժամ կը գնանք»: Ի՞նչ պիտի անէր խեղճ սրբազանը. հրամայում է, որ Զատիկից յետոյ Առուշանին իր մօտ ուղարկեն ձեռնադրելու: Զատիկն անցաւ թէ չէ, Առուշանը ճանապարհ ընկաւ քաղաք: Իշխանները խնդրեցին Յովհաննէս հայր սուրբին, որ նա էլ Առուշանի հետ գնայ քաղաք, այնտեղ աշխատի, որ քննութեան ժամանակ Առուշանը սկերես չը մնայ. հայր սուրբը գնաց, բայց

<sup>1)</sup> Եղջերու:

յետոյ շատ փոշմանեց: Քննութեանը Առուշանը վայ էն հալին մի քանի աղօթքներ է բերանացի կարդում ու քանի շարականներ երգում, բայց երբ բանը հասնում է աւետարանին, խեղճը բոլորովին գլուխը կորցնում է: Քննութիւն անող քահանաներից մինը հակառակի պէս մի բոլորովին անծանօթ գլուխ է բաց անում աւետարանից ու առանց կարգալ տալու սկսում հարցնել. «ցոյց տուր, տիրացու, այս երեսում «այբը» որն է, «բէնը» որն է և այլն: Առուշանը համարձակ բոլոր տառերը ցոյց է տալիս, բայց երբ հերթը հասնում է «նի» սաստիկ շփոթւում է, դէս ու դէն է ընկնում, զատ չի դառնում: Հայր սուրբը, տեսնելով, որ բանը խարաբ ա լինում, իսկոյն մէջ է մտնում. «Արդի ջան,— ասում է նա,— բա չես յիշում «նուն» ուր ա: (Հայր սուրբը դեռ վանքում եղած ժամանակ Առուշանին ասած է լինում, որ «նուն» հէնց ա թա աղբանոցում պըպզած շուն լինի): Քեզ հարցնում են,— շարունակում է հայր սուրբը,— «նուն» ուր ա, «նուն» ուր ա:— «Հայր սուրբ, էնա հրէ աղբանոցում պըպզած» պատասխանում է մեր Առուշանը, բոլորովին գլուխը կորցրած, մտաբերելով հայր սուրբի համեմատութիւնը:



Է՛, Մնացական ապօր պատմածի որ մէկն  
ասեմ: Նա մեր տէրի աչքի տակիցն է կալել,  
բայց ոչինչ չի կարողանում շինել. էս ու էն  
պատի տակին նստած բամբասում է, ուրիշ  
ոչինչ: Երկու երեսանի մարդ է. տէրին ա-  
ռանց «օրհնեա տէրի» երբէք չի հանդիպում,  
միշտ բերնում պատրաստ ունի այդ խօսքերը:  
Երբ տէրին պատահում նրանց տունը գնալ,  
Մնացական ապէրը քիչ է մնում նրան պա-  
տուելու համար տան կթի կովը մօրթի: Ի՞նչ-  
ու. որովհետեւ տեսնում է, որ տէրը մեր  
երկրի, մեր հողի մարդ է, մեզ հետ եօլա  
գնալն իմանում է: Ասացէք, խնդրեմ, մի ու-  
րիշ քահանայ այսպիսի դէպքն առանց զալ-  
մադալի կը թողնէ: Չունամանց Ասրի տանը  
կնունք է լինում: Երբ տէրը կնքաւորով, տի-  
րացուով ու հիւրերով ներս է մտնում, տես-  
նում է տան մէջ տեղը կապերտի վրայ Չու-  
նամանց Բողար շունը փառաւոր նստած. տէ-  
րամեռն իսկի տեղից չի շարժուում. բոլորն էլ  
մնում են կանգնած: Այդ միջոցին ներս է  
մտնում Ասրին ու, տեսնելով բանն ինչո՞ւմն  
է, դառնում է Բողարին հետեւեալ խօսքերով.  
«՛ շուն, վեր կաց, տէրը նստի. ա՛, սատկած,  
քեզ հետ չեմ, վեր կաց, տէրը նստի. հրէ,  
հրէ. հրէ, տէրամեռը կապերտի վրայ հէնց

նստել ա, կասես թա տէրն ինքն ա, ըսին  
ինքն ա կնքել»: Բողարը վեր է կենում, իր  
փասափուսէն քաշում: Տէրը հիւրերի հետ նրա  
տեղը ծալապատկում է, սկսում է ուտել, խը-  
մել ու Ասրի տուն ու տեղն օրհնել:

Մի ուրիշ անգամ տէրը Ադունց տունն  
է գնում տնօրհնէքի: Յայտնի է, որ Ադունք  
շատ կոշտ ու կոպիտ մարդիկ են, մանաւանդ  
նրանց Սահակը: Երբ տէրը ներս է մտնում,  
մահի տարած Սահակը իսկի տեղից չի շարժ-  
ւում: Տէրը նրա ինչ պտուղ լինելը լաւ իմա-  
նալով, ամենեւին բան չի ասում: Երբ տունն  
օրհնում է, Սահակի մայրն ուզում է տէրին  
մի բանով պատուել, ուստի հրաւիրում է նըս-  
տել. բայց արջ Սահակը ամբողջ կապերտը  
բռնած չի էլ մտածում տեղից շարժուել: Մայ-  
րը, այդ նկատելով, քաղցրութեամբ դառնում  
է նրան և ասում. «՛ Սահակ. քե մատաղ,  
վեր կաց, տէրը նստի»: Սահակը մօր երեսին  
անգամ չի նայում: «Սահակ ջան, վեր կաց,  
տէրը նստի», — կրկնում է մայրը. Սահակը  
դարձեալ մնում է անշարժ: Երրորդ, չորրորդ  
անգամ կրկնում է մայրն իր խնդիրքը. վերջա-  
պէս Սահակը կանգնում է տեղից, քայլերը  
դէպի դուրս ուղղում ու իր սովորական կոպ-  
տութեամբ ասում. «Հայ, իմ վեր կենալից ե-



տը տէրը չի նստի իմ տեղը մի սև շուն նստի»:

Սահակը յայտնի արջ է. նա իրանից ոչ մեծ է ճանաչում, ոչ փոքր: Տէրը նրանից չի նեղանում. նստում է Սահակի տեղն ու մեղրով ձուածեղ անուշ անում:

Ասենք առաջին անգամը չի Սահակը տէրի հետ այգալէս վարում. տէրը լաւ սովոր է նրա կոպտութիւններին: Մի անգամ Աղունց տանը կնուռք է լինում. տէրը երեսային երբ եկեղեցուց բերում է, տունն օրհնելուց յետոյ ըստ սովորականին զառնում է երեսայի մօրը, Սահակի մեծ եղբօր կնոջն ու ասում. «ասա՛ բուրվառ», կինը կրկնում է՝ «բուրվառ», «իմը տուր, քոնն առ», — պատասխանում է տէրը, այսինքն՝ կնքադրամը տուր, երեսայիդ առ: Սահակն այդ միջոցին մօտենում է տէրին ու ասում. «ա՛ տէր, դէ դու էլ ասա՛ քահանայ»: Տէրը կրկնում է՝ «քահանայ» — «Հոգիդ առնի մի սև սատանայ», — պատասխանում է Սահակը: Տէրը փոխանակ բարկանալու, բարձրաձայն ծիծաղում է, հիւրերը հետևում են նրա օրինակին ու կնուռքն ուրախ, զուարթ անց է կենում:

Մեր տէրը մեծի հետ մեծ է, փոքրի հետ փոքր. դատարկ բաներից նա չի նեղանում

երբէք. շատ որ բարկացնես, հօրդ կանիծի, մօրդ կանիծի, թէ խմած լինի, մի քանի թուռդ խօսք կասի: Ամա բաւական ա, որ փափախդ վերցնես, մօտենաս աջն առնես, որ ամեն բան մոռանայ ու «Աստուած թողու՛թիւն շնորհի, որգի ջան» ասի ու գլխիդ մի պահպանիչ կարգայ: Տէրը իր ժողովրդի հետ ամեն բանում եօլա գնալն իմանում ա. եկեղեցում գանձանակ հաւաքելիս թաբախի մէջ փողի տեղ պատահում է մի զոյգ մեխ, կամ մի իշի նալն ես գցում. տէրը չի նեղանում, օրհնութեամբ ընդունում է: Նա էլ մարդ ա, նա էլ տուն ու պուճախի, հանդ ու հայվանի <sup>1)</sup> տէր ա, նալն ու մեխը նրան էլ են պէտք գալիս: Զրօրհնէքին ու Զատիկին տէրը գալիս է տունդ օրհնելու, քեասիբ <sup>2)</sup> մարդ ես, պատահում է որ զրպանումդ մի կոպէկ անգամ սև փող չը կայ, ասում ես. «ա՛ տէր, կարգիդ մատաղ, մի քանի շահի սև փող կար ձեռքիս, այն էլ գրագիր Մինասն առաւ անցեալ տարուայ իր զրած մի խնդրքի համար: Այս իմ տունն, այդ դու. տանով ու տեղով լոխ քոնն ենք, ինչ քէֆդ տալիս է, վեր առ հետդ տար»: Տէրը դէս է նայում դէն է նայում. կամ մի

1) Անասունի: 2) Աղբատ:



ճուտ է վերցնում, կամ մի պուլիկ իւղ ու Աստուծոյ օրհնանքը գլխիդ թափելով տնիցդ դուրս է գնում:

Ամեն ցաւի, ամեն պատուհասի մեր տէրը միշտ վերահասու է յինում: Պատահում է կովդ կորչում, սար ու ձոր չափում ես, բան չես գտնում. գնում ես տէրի մօտ երկու ձեռքով աջը բռնում, համբուրում ու առաջին խոնարհում: «Ա՛ տէր,—ասում ես—իմ տունն ու տեղը, քուլփաթս ու օղուշաղս քեզ ղուրբան, կովս կորել ա, Կիլ-կապ արա, հէնց որ գտայ, մի գառը մատաղ կանեմ, հէրին <sup>1)</sup>, մորթին, գլուխն ու ոտքերը քեզ կուղարկեմ»: Տէրը ձեռաց թուղթ ու ղալամը ձեռք է առնում ու Աւետարանի վրայ Կիլ-կապ անում: Աստուծուն փառք ես տալիս ու գնում հանգիստ քնում. գիտես, որ տէրի կիլ-կապից ետը գալլի ռեխը <sup>2)</sup> բաց չի լինիլ, անիրաւը սովից պատառ-պատառ կը լինի, ամա կովիդ մի մազին անգամ չի կարող դիպչել:

Երբէք չեմ կարող մոռանալ տէրի կատարած հետեւեալ հրաշքը: Մի անգամ մեր Զէյրան կովը իր հորթի հետ կորել էր: Տէրը կիլ

<sup>1)</sup> Եջ կողմի թիակը:

<sup>2)</sup> Բերանը:

կապ արաւ: Մի ամբողջ շաբաթ մենք էլ տեղ չը թողինք, ման եկանք. զատ չի երևաց. վերջը գտանք Զէյրանին Աւագանայ աղբրի ձորում իր հորթի հետ հանգիստ արածելիս, իսկ նրա մօտ երկու գայլերի անշնչացած դիակներ ընկած: Դէ, եթէ մեր տէրի կիլ-կապը չը լինէր, այդպիսի հրաշք կը պատահէր: Մնացական ապերն ասում ա, որ այդ Զէյրան կովի պոգերի հունարն էր, այլ ոչ թէ տէրի կիլ-կապի. բայց յայտնի է արդէն, որ նա խելքից ընկած ծեր մարդ է. նրա խօսքերին ով է ուշադրութիւն դարձնում:

Մորեխի ու մկան տարի է պատահում: Տէրն արդեօք մի ըուպէ հանգիստ ունի՞. ո՛չ: Խաչն ու Աւետարանը ձեռքին, մէր ու մանուկ ետեից գցած դաշտ է դուրս գալիս, էս խաչի էն խաչի մօտ թափօր անում, Աստուծուց գթութիւն և ողորմութիւն խնդրելով մեզ համար: Երբ տէրը հեկեկալով երգում է «Օրհնեսցի և նախախնամեալ պահեսցի այս նշանաւս, սուրբ խաչիւս և սուրբ Աւետարանաւս արևելեան կողմն աշխարհի», կանանց աչքերից արտասուքը հեղեղի պէս թափվում է, սուգ ու շիւանի ձայնը մինչև երկինք է հասնում և Աստուած մեր աղաչանքը լսում է: Թափօրը վերջանում է: Տէրը դառնում է



ժողովրդին և ասում. «սիրելի ժողովուրդ, մուկն ու մորեխը Աստուծոյ ուղարկած պատիժ է: Ի՞նչու համար. — մեր մեղքերի: Տեսնում էք, գնալով նրանք բազմանում են. նրանց ոչնչացնել մենք չենք կարող: Աստուծոց ուղարկած պատժին չը պիտի ընդիմադրես, այլ պէտք է նրա անունն օրհնելով կրես պատիժն ու քաւես քո մեղքերը: Եթէ ընդիմադրես, երկնքից հուր ու կրակ կը թափուի աշխարհիս վրայ ու ամեն ինչ կը ոչնչացնի, ինչպէս այդ պատահեց Սոգոմ Գոմորի հետ: Արդար Յովբը երբ զրկվեց աշխարհիս բոլոր բարեքներից, չը կորցրեց իր հաւատն առ Աստուած: Այդ բաւական չէր. նա սկսեց մարմնով փտել, գարշահոտութիւն տարածելով իր չորս կողմը, բայց նրա արդար հոգին չը կորցրեց իր մաքրութիւնը ապականուած մարմնի մէջ: Նա շարունակում էր փառաբանել Տիրոջ անունը և Տէրը նրան կրկին առողջութիւն ներշնչեց որից յետոյ առաքինի Յովբը կրկին ձեռք բերելով իր բոլոր կորցրածը, կրկին տէր դարձաւ կնոջ, զաւակների, թուռների, ծուռների, հոտերի և ճախիրների: Ուրեմն սիրելիք, դուք էլ հետևեցէք այդ արդար նահապետի օրինակին, միք տրտնջալ, մի ընդիմադրէք Աստուծոյ պատ-

ժին, այլ հեղութեամբ տարէք այս բոլոր պատուհասները. աղօթեցէք Աստուծուն, փառաբանեցէք նրան Որն է տէր երկնքի և երկրի, ծովի և աւազի, հանդ ու հանդաստանի, — մի խօսքով, բոլոր շնչաւոր և անշունչ արարածների: Նայեցէք վերև, այնտեղ երկնքում դրած է ոսկէ թախտը, որի վրայ բազմած են Հայր, Որդի և Հոգին Սուրբ, իսկ մեր Տէր Լուսաւորիչը նրանց մօտ կանգնած բարեխօսում է մեզ համար: Արտասուեցէք, աղօթեցէք, Խաչի և Աւետարանի առաջ ծուռ չօքեցէք ու չօք-չոք մօտեցէք նրանց: Աստուած կը լսի մեր լաց ու կոծն ու կրակ կը թափի ոչ թէ մեր գլխին, այլ նրանց, որոնք այսօր լափում են մեր ոսկեփայլ արտերն ու կանաչազարդ դաշտերը»:

Տէրը վերջացնում է իր քարոզը: Ժողովուրդը մօտենում է խաչն ու աւետարանը համբուրելու: Շատերն առնում են տէրի աջն ու աջահամբոյր տալի: Տէրն օրհնութեամբ առնում է, ինչ որ տալիս են. նրա համար շատ ու քիչ չը կայ, նրա համար հարուստ ու աղքատ չը կայ, — բոլորը հաւասար են, բոլորը նրա ժողովուրդն ու հարազատ զաւակներն են: «Աստուած շէն պահի իմ ժողովուրդը, — յաճախ կրկնում է նա, — հարուստն



իր գառը չի խնայում ինձ համար, իսկ աղ-  
քատն իր ճուտը: Տէրի համար ամեն տանը  
բաց սուփրայ կայ, ամեն տան մի բաժակ գի-  
նի կամ արագ է գտնվում նրանց հին ու նոր  
ննջեցեւանց ողորմաթասը խմելու համար, կամ  
նրանց տունն ու պուճախն օրհնելու: Ե՛ր,  
ի՛նչ ասեմ էլ: Աստուած ժողովրդին պահի տէ-  
րի համար, իսկ տէրին ժողովրդի»:

Կան մարդիկ, որոնք բամբասուում են, թէ  
տէրը չի վարում, չի հնձում, արտ ու արօ-  
տատեղի չունի, այդ պատճառով էլ ուրիշնե-  
րին յորդորում է, որ մորելին ու մկան  
չընդիմադրեն, որ Աստուած աւելի խիստ չը  
պատժի: Ե՛ր, ի՛նչ ասեմ այդպէս ասողներին:  
Նրանք որ կան կոյր մարդիկ են, եկեղեցու  
շէմքը չեն ճանաչում, այստեղ-այնտեղ այլե-  
բէնի հօտ են առել, էլ իրանցից մեծ չեն ճա-  
նաչում. տարին մի անգամ ամառ ժամանակ  
սպիտակ շլապկաներ գլխներին դրած թալա-  
կից փախած աղուէսների նման երևում են  
մեր մէջ, էլի կրկին անհետանում, եօթը սա-  
րի, եօթը ձորի քամակ կարգալու գնում ու  
քանի շատ են կարդում, այնքան աւելի են  
սարսաղւում, էլ ոչ պաս են ճանաչում, ոչ  
ուտիս: Վարդապետի կամ քահանայի պատա-  
հած դէպքում ոչ «Աստուած օգնական է լըս-

վում նրանցից, ոչ «օրհնեա տէր»։ շատ-շատ  
ձեռքը մի այլն-օյլն դէպի շլապկէն կը տա-  
նեն ու «բարե ձեզ, տէր հայր» կասեն, հէնց  
գիտենաս թէ «տէր-հայրը» նրանց պէս օձ  
պարածող լինի: Մինն ասի. «ատա՛ շըլըպկա-  
վեր պարուն, մէջքդ կը կոտրի, որ էդ զահ-  
րումար շըլապկէդ վերցնես կռան տակիդ դը-  
նես, մօտենաս տէրի աջն առնես, մի ըռելի  
«օրհնեա տէր» ասես ու մի պահպանիչ խընդ-  
րես: Ասում են թէ տէրը վար ու ցանքս չու-  
նի: Խի, կարծում էք, թէ տէրը ձեզ պէս ձէ-  
թի ճրագ է, որ թեթեւ քամուց հանգչի: Մի  
նեղուծիւն քաջեցէք, գնացէք դաշտը, տեսէք  
տէրն ինչպէս գուծանի մաճը բռնած «հօ քե  
մատաղ, հօ» անելով ակոսն ակոսի վրայ է  
դնում, կամ շորերը շալվարը հաւաքած ման-  
գաղը ձեռին սարի նման կանգնած արտը մի  
քանի սհաթում նստացնում է տեղը, կամ գե-  
րանդին երկու ձեռքով բռնած կանաչ դաշ-  
տին է ածիլում: Տէրի գերանդիի առաջ աբ-  
րեշումանման խոտերը հէրանց գնացող հարս-  
ների նման դէս ու դէն են տատանվում,—  
այդ բոլորը մի տեսէք, յետոյ մեր տէրի մա-  
սին խօսեցէք է: Մի պիտի տեսնէիք, ինչպէս  
մեր տէրը ձեռքերը դէպի երկինք բարձրաց-  
րած փառաբանում էր Աստուծուն, երբ նրա



Խաչի հողի արտը մորեխը մի քանի օրում անհետացրեց: Ես տէրի հնձողն էի. Լուսաւորչի պասն էր, գնացել էինք միասին հնձելու, վաղ առաւօտեան գնացինք և ինչ տեսանք. մորեխն եկել էր, արտի սահմանը ծածկել ու քիչ-քիչ առաջ էր շարժվում: Տէրն այդ որ տեսաւ, փափախը վերցրեց, երեսին խաչակընքեց ու դարձաւ մորեխին հետեւալ խօսքերով. «այ, դուք բարով էք եկել, հազար բարի էք եկել. էդ ո՞րտեղ էիք, ձեր սուփրայսեղանը այստեղ պատրաստ, դուք ո՞ւր էիք մինչև այժմս անջուր ու անպտուղ անապատներումը թափառում. արտ ու դաշտը ձեզ փէշքէշ, կերէք լիացէք, մենք վարել, ցանել, բուսցրել ենք ձեզ համար: Աստուծոյ տունը շէն կենայ. նա մեզ մինին հազար կը տայ: «Քնանք, որդի ջան, գնանք, — դարձաւ ինձ տէրը, — թո՛ղ Աստուծոյ կամքը կատարվի: Ես էլ մարդ եմ, ես էլ պիտի իմ պատիժը կրեմ: Մեծ է Աստուծոյ գթութիւնը. նա մեզ սոված չի թողնիլ. երբ հաց չի լինիլ, խոտ կարածենք. երբ ամեն բան ոչնչանայ, էլի մենք սովամահ չենք լինիլ. Աստուած իր երկնային մանանէն մեղանից անպակաս կը պահի»:

Երաշտ է պատահում: Տէրը դարձեալ հանգստութիւն չունի. սար ու ձոր չի մնում,

ամեն տեղ թափօր է անում, այս ու այն սըրբավայրում, վանքում ու անապատում մատաղ է անել տալիս: «Ձեր մատաղը միշտ ընդունելի կը լինի Աստուծոն, — ասում է տէրը, — եթէ անկեղծ սրտով զոհ բերէք Նրան: Ամեն մարդ իր կարողութեան համեմատ պիտի մի բան զոհի ու սրբերի բարեխօսութիւնը խնդրի: Եթէ եզն ունես, եզդ զոհիր. եթէ արջառ — արջառդ, եթէ ոչխար — ոչխարդ, եթէ ուլ — ուլդ, իսկ եթէ շատ խեղճ ու քեասիւր մարդ ես, այն ժամանակ զոնէ մի աքաղաղ զոհիր, իմացած լինելով, որ քո միակ աքաղաղն էլ այնքան ընդունելի է Աստուծոն, որքան զրացի հարուստի եզը կամ արջառը»: Չար մարդիկ, Աստուած նրանց թաչփէն կտրցնի աշխարհիս երեսից, — այդպիսի դէպքերում էլի բամբասում են. «Ձեր տէրը ստիպում է ձեզ մատաղներ անել, լաւ իմանալով, որ երաշտի վերջանալը կամ շարունակուիլը մատաղից չի կախուած: Այդ մատաղներից նա մեծ շահ ունի, նախ քան մատաղացուի մորթելը նրան պէտք է օրհնած աղ տալ, իսկ այդ աղն ո՞վ է օրհնում. — տէրտէրը: Զրբ. — ո՛չ, մի կամ երկու շահի սև փող է ստանում: Այդ դեռ բաւական չէ. մատաղի հէրին, ոտները, գլուխըն ու մորթին ո՞ւմ է պատկանում. — տէր-



տէրին: Ժամկոչին էլ հօ Աստուած հեռու տանի. հարկ հաւաքողի պէս իւրաքանչիւր մատաղատիրոջ գլխին հարիրտա չաքուչ է զարկում ու ամեն տեղ կրկնում. «Լաւ, շատ լաւ, շատ օրհնուիս, տանով տեղով շէն կենաս, երեք հարիւր վաթսուն հալրապետների օրհնութիւնը քո ու քո օջաղից անպակաս լինի. էդ բոլոր տուածդ տէրին, բա թնձ, ես էլ եկեղեցու սպասաւոր եմ, ինձ որ զրկես, Աստուած էլ քեզ կը զրկի իր բարեքներէից»: ձար չի կայ. մատաղատէրը հէրի միւսն էլ ժամկոչին է տալիս Նրա անէծքներից ազատուելու համար: Մի նեղութիւն քաշեցէք, պարոններ, — տսես այդ բամբասողներին, — գնացէք սպիտակամիրուք ծերերի մօտ այդպէս խօսեցէք, — միայն ոչ խելքից ընկած Մնացական ապօր մօտ, նա էլ ձեզ պէս փարմասոն ա: Այ ինչ կասեն նրանք ձեզ. «Մատաղը ըսկըսած հայր Աբրահամից ու Նոյ նահապետից Աստուծոյ սեղանի զարդն ա, որը բաց է բոլոր մահկանացուների առաջ, թէ հարուստի, թէ աղքատի, թէ մեծի, թէ փոքրի, թէ արանց և թէ կանանց: Մատաղ անելով, մենք դնում ենք մեր զոհը Տիրոջ սեղանի վրայ, որին ամեն մարդ կարող է մօտենալ, իսկ առաւել ևս քահանան, Տիրոջ ծառան»: Ծերու-

նիները ուրիշ շատ իմաստուն բաներ կասեն զեռ, բայց իզուր. այդ պարոնները նրանց հասկանալ չեն կարող: Մեր պապերից ու տատերից մնացած սովորութիւն է մատաղի աղն օրհնել տալը, հէրիները, մօրթին, ոտներն ու գլուխը տէրտէրին ու ժամկոչին ղրկելը, հակառակ դէպքում մատաղն անընդունելի կը լինի: Ի՞նչ արած, որ մենք խաւար մարդիկ ենք, այիւրեքնի համ չենք առել, քերականութիւն ու նրա նման հաստ հաստ գրքեր չենք կարդացել: Ինչ ճանապարհով մեր պապերն են գնացել, այն ճանապարհով էլ մենք ենք գնում: Մեր կապը մեր տէրի ձեռքին է. նա լաւ է իմանում ուր է տանում մեզ. մենք էլ չենք հարցնում, թէ՛ ա՛ տէր ո՞ւր ես տանում, ալլ գլուխներս քաշ արած խաչուորի իշի պէս լետեից գնում ենք: Նա մեր հովիւն ա. ոչխարի հօտը հարցնում ա արդեօք թէ հովիւը նրան ուր ա քշում. մենք էլ նրա հօտն ենք, գնում ենք առաջ առանց հարցնելու, լաւ իմանալով, որ մեր տէրը թույլ չի տալ դալքերին մեր մի մաղին անգամ դիպչել: Երաշտի ժամանակ, երբ երկնքից կրակ է թափւում, տէրը միմիայն մատաղներով չի զբաղւում: Նա գիւղի պառաւ կանանց ետեից գցած գնում է գետի յատակն արօրով վարե-



լու, որը նույնպէս շարժում է Աստուծոյ գը-  
թութիւնը: Մի պիտի տեսնէք, ինչպէս տէրը  
պառաւների հետ ընկած մինչև գօտին ջրի  
մէջ թաղուած արօրը դէս ու դէն է ձգում,  
շարականը շարականի ետևից երգելով, խրա-  
խուսելով զառամեալ տատերին, որոնք նոյն-  
պէս կիսով չափ ջրի մէջ ընկղմուած արտա-  
սուր թափելով հետևում են տէրին, հաւա-  
տացած լինելով, որ նրա աղօթքները կը հաս-  
նեն Տիրոջ ականջին, ու փրկարար անձրևնե-  
րը լիութիւն կը տան այրուող, պղպղացող աշ-  
խարհին: Երբ «գետի վարելն» էլ չի օգնում,  
կարծում էք, թէ տէրը յուսահատ տեղը նըս-  
տում է— ոչ: Նրա չարչարանքներն այն ժա-  
մանակ կրկնապատկւում են. նա՛ այն ժամա-  
նակ ոչ հանգիստ ուտիլ ունի, ոչ խմիլ, ոչ  
քուն, ոչ հանգստութիւն, ոչ տուն, ոչ տեղ:  
Քրիստոսի առաքեալի նման ոտաբոբիկ ու գըլ-  
խաբաց երկար ցուպը ձեռքին նա ճանապարհ  
է ընկնում դէպի հեռաւոր Արթոն սարը:

Դիտէք արդեօք որտեղ է գտնուում այդ  
սուրբ լեռը. հեռու, շատ հեռու, Աստուծու  
պատի տակին: Ամպերն են միայն նրա գա-  
գաթին հասնում: Արեգակը, լուսինն ու աստ-  
ղերն են միայն տեսնում, թէ ինչ հրաշքներ  
են կատարւում նրա բարձրութեան վրայ: Մե-

ղաւոր մահկանացուն երբէք ոտք չի դրել  
նրա գագաթի վրայ. արդարներին է միայն  
նա մատչելի: Նրա ձիւնազարդ գագաթի վրայ  
հանգչում են Արթոն ճգնաւորի սուրբ նշխար-  
ները: Երաշտ տարիները ձիւնը քիչ քիչ հալ-  
ւում է. հարիւրաւոր վտակներ ցած են հո-  
սում դէպի լեռան խորքերը, իրանց հետ կեանք  
և կենդանութիւն տարածելով այրուող դաշ-  
տերի համար: Մեր տէրն ասում է, որ առա-  
ջին վտակը գոյացաւ Արթոն ճգնաւորի արտա-  
սուրքներից: Տէրը ոտաբոբիկ ու գլխաբաց գի-  
շեր ցերեկ գնում է դէպի Արթոն: Գազան-  
ներն անգամ խոնարհւում են նրա առաջ: Տէ-  
րի շարականների քաղցրահնչիւն մեղեդին զըս-  
պում է նրանց: Թուրք և քիւրդ խաշնարած-  
ներն ու աւազակները չեն համարձակւում տէ-  
րի մի մազին անգամ դիպչել, որովհետև նը-  
րանք լաւ իմանում են, թէ ուր է գնում  
տէրը, նրանք էլ այրւում են երկնքից թափ-  
ւող կրակի մէջ ու զգում են որ իրանց փըր-  
կութիւնը սուրբ Արթոնի գագաթից է գալու,  
երբ տէրը ծունկ կը չոքի այնտեղ ու կը վերց-  
նի նուիրական քարը: Երկար տառապանքնե-  
րից ու անքուն գիշերներից յետոյ տէրը վեր-  
ջապէս հասնում է Արթոնի ստորոտին: Ծունկ  
է չոքում տէրը, գլուխը գետնին խոնարհեց-



նում ու աղի աղի արտասուք թափում: Ի՞նչ է խնդրում նա, թե՛նչ է աղաչում, պաղատում, — այդ իրան է յայտնի: Աստուած լսում է նրա աղօթքը, ոյժ և արիութիւն է տալիս նրան, և նա, մոռանալով կրած տանջանքները, ոտի է կանգնում ու սկսում մեղմ, բայց հաստատ քայլերով բարձրանալ լեռան գագաթը: Ի՞նչ, ի՞նչ տանջանքներ չի կրում նա, ի՞նչ վտանգների չի ենթարկւում. անդունդների ծայրերով է անցնում, անդունդների խորքեր է իջնում, սրածայր քարերից ու մացառներից բռնելով, քայլ առ քայլ առաջ է գնում, շորերի փալասները թողնելով մացառների վրայ, ձեռքերի ու ոտների արիւնով ներկելով ատամնաւոր ժայռերը: Տէրը ցաւ չի զգում. նրա հոգին ու միտքը ուրիշ տեղ են: Վերջապէս տէրը հասնում է գագաթին. այդ ընկալին նա չի զգում, թէ ինչ է կատարւում իր հետ. մոռանում է կրած ցաւերն ու նեղութիւնները. նա իրան զգում է մի տեղ, որ աշխարհքից բարձր, շատ բարձր է, բոլորովին երկնքի, լուսնի ու աստղերի տակն է, մի տեղ, ուր միայն արդարներն են ժողովւում, ուր մեղաւորն իսկոյն կայծակահար կը լինի, եթէ համարձակուի ոտք դնել այնտեղ. Տէրի աչքերի առաջ այնտեղից բացւում է Մասիսը Նոյի տա-

պանով, Խոր վիրապն ու Ս. Էջմիածինը: Երբ տէրը մօտենում է Ս. Արթնի գերեզմանին, բոլոր մարմնով ցնցւում ու տարածւում է նրա վրայ. երկար, շատ երկար աղօթում է տէրը, արտասուքը հեղեղի նման թափւում է նրա աչքերից: «Ես քո սուրբ զօրութեանը մատաղ, ով մեծ ճգնաւոր, ասում է տէրը հեկեկալով, — երկնքից կրակ է թափւում ու այրում աշխարհքս. էլ արտերում հասկ չկայ, դաշտերում խոտ ու ծաղիկ, ծառերի վրայ կանաչ տերև: Առուններն ու գետերը ցամաքել են, աղբիւրների ակներում օձերն են բուռ դրել: Մալդ ու անասուն կոտորւում են, նրանց արտասուքից գետեր կարող են գոյանալ, բայց այդ գետերը դառնութիւն միայն կը տարածեն ամեն կողմ, այլ ոչ թէ կեանք ու կենդանութիւն: Ով սուրբ նահատակ, բարեխօսի Տիրոջ առաջ մեզ, մեղաւորներին համար. մեծ է նրա գթութիւնը. նա իր ստեղծած աշխարհը մի բուռը մեղաւորներին պատժելու համար չի ոչնչացնիլ: Վերջացնելով իր աղօթքն ու աղաչանքը, տէրը դողդոջուն ձեռքով Ս. Արթնի գերեզմանի վրայից մի փոքրիկ ձիւնաթաթախ ձիւնի նման սպիտակ քար է վերցնում, խորին ջերմեռանդութեամբ համբուրում նրան ու, փաթաթելով աբրջումի



Թաշկինակի մէջ, դնում է ծոցը: Վերջին անգամ համբուրում է տէրը Արթոնի ս. գերեզմանը ու ծանր քայլերը՝ դէպի ցած ուղղում: Տէրն ուրախ և զուարթ է. նա շարժւում է շատ ծանր, այնքան ծանր, կարծես իր ձեռքերում բռնած լինի սկիհը ս. մասունքներով: Տէրը ցաւ ու տանջանք այլ ևս չի կրում. մացառներն ու թուփերը նրա առաջ խոնարհւում են ու սրածայր քարերն իրանց տակ թաղում, — այնքան մեծ է ս. Արթոնի զօրութիւնը: Երբ տէրը հասնում է լեռան ստորոտին, նրա առաջին այլ ևս ասեղ գցելու տեղ չի լինում, հայ ու թուրք ամբողջ լեռնադաշտը ծածկած իրանց հօտերով ու նախիրներով նրան են սպասում, թէ տեսնեն, ինչ խաբար է բերում տէրը սուրբ Արթոնից՝ խէր, թէ շառ, մահ, թէ փրկութիւն: Այդ միջոցին մեր տէրը նմանւում է Մովսէս մարգարէին տասը պատուիրանները ձեռքին Սինա սարից իջնելիս: Տէրի ձեռքին ճշմարիտ է ոչինչ չը կայ, բայց բոլորն էլ գիտեն, որ նրա ծոցում արըշում է աղլուխի մէջ փաթաթած կայ «Արթոնայ քարը», որ իր հետ կեանք ու փրկութիւն է բերում ամբողջ աշխարհին: Լեռնային ժողովուրդը, որ բաղկացած է հայ և թուրք խաշնարածներից, երկու մասի է ճեղքւում ու տէրի

առաջին լայն ճանապարհ բաց անում: Տէրը գլխաբաց ու ոտաբոբիկ ձեռքերը դէպի երկինք ամբարձած աղօթքներ մրմնջալով ներանց միջով անցնում է: Տէրի լուռ, բայց զուարթ հայեացքը բաւական է նրանց հասկացնելու, որ Աստուծոյ գթութիւնը մեծ է. նա չի ոչնչացնիլ իր ստեղծած աշխարհը. պիտի աղօթել ու ծոմ պահել ու աղպիսով շարժել նրա գթութիւնը: Հայ և թուրք խոնարհւում են տէրի առաջ. հայերը փափախներ են վերցնում, իսկ թուրքերը ձեռքերը սրտերին դրած խորը երկրպագութիւն են տալիս մեր տէրին: Տէրը ծանր, խորհրդաւոր քայլերով առաջ է շարժւում, կրկին մին-միայնակ շարունակում է իր ճանապարհը օր ու գիշեր համարեա մի հանգիստ ըսպէ չունենալով. շատ որ յոգնի, գլուխը մի չոր քարի վրայ կը դնի ու մի քիչ աչքահոսքի տալուց յետոյ կրկին ոտաբոբիկ կը շարունակի ճանապարհը, նուիրական քարը երբէք ծոցից չը հանելով: Վերջապէս տէրը հասնում է գիւղը. պիտի տեսնէք ինչ փառաւոր մուտք է գործում նա գիւղը: Ժողովուրդը խուռն բազմութեամբ դուրս է գալիս նրա առաջ: Տէրը, աղօթելով, լուռ անցնում է ժողովրդի միջով: Խորին ակնածութեամբ ամեն ոք խոնարհեցնում է իր



գլուխը մինչև գետին. շատերն արտասուում են: Բոլորն զգում են, թէ ինչ է խնդրում այդ ըուպէին նրանց համար տէրը, որը, շարունակելով աղօթել, ուղղում է իր քայլերը դէպի եկեղեցին, իր յետևից ունենալով ողբացող ամբոխը: Եկեղեցու զանգակները աւետում են ամբողջ աշխարհին տէրի Արթոնից գալն ու ս. քարի անվտանգ տեղ հասնելը. հեռու, շատ հեռու են սլանում զանգակների աւետաբեր հնչիւնները, տարածելով ամեն կողմ յոյս, հաւատ և մխիթարութիւն: Տէրը, երբ մուտք է գործում եկեղեցին, իսկոյն ծունկ է չոքում ու չոք-չոք առաջ շարժւում դէպի ս. սեղանը: Երբ տէրը սեղանին է հասնում, կանգնում է տեղից ու կրկին տարածւում է գետնի վրայ. նա ծունր է դնում ու գոհութեան աղօթքներ կարգում, որ Աստուած արժանացրեց նրան Արթոնի գազաթից ս. քարը բերել: Դողդողուն ձեռքերով հանում է տէրը ծոցից աբրշուժէ աղլուխն ու դնում սեղանի վրայ. յետոյ էլի մի քանի անգամ ծունր է դնում տէրը ու լուռ ուղղում իր քայլերը դէպի շէմքը: Տէրը գնում է տուն, ամբոխը ցրւում է: Նա ոչ ոքի հետ չի խօսում, մինչև անգամ իրանց տանեցիների հետ. նա պիտի մինչև պատարագի օրը միայն սուրբերի

ու հրեշտակների հետ խօսէ, օր ու գիշեր սաղմոսագիրքը կարդալով:

Վերջապէս հասնում է պատարագի օրը: Եկեղեցին լցւում է ամբոխով. թէ դրսում և թէ ներսում ասեղ գցելու տեղ չի լինում: Տէրը պատարագի է: Բոլորի աչքերը դէպի ս. սեղանն են ուղղուած, ուր լուսազարդ խաչկալի առաջ կանգնած է տէրը, դպիրներով ու տիրացուներով շրջապատուած: Նրա առջև ս. սկիհի կողքին արծաթէ թեփշի վրայ դրած է Արթոնայ քարը աբրշուժէ աղլուխով ծածկուած: Տէրը մեծ ջերմեռանդութեամբ աղօթում է. ժողովուրդը նոյնպէս աղօթում է: Դրսից մտնողները հաղորդում են, որ երկնքի վրայ ամպեր են երևում: Պատարագը վերջանում է: Տէրը սաղաւարտը գլխին սեղանից իջնում է. ներքևում խաչ, աւետարան, խաչուառն ու քշոցները պատրաստած նրան են սպասում: Տէրը, երբ ցած է իջնում, մի թեթև կարգ է կատարում ու վերջը նշան է տալիս առաջ շարժուել: Տիրացուներն սկսում են քաղցրահնչիւն շարականներն ու դուրս գնում եկեղեցուց. այժմս գնում են գետը Արթոնայ քարը ջուրը գցելու համար: Թափորի վերջում ծանր քայլերով շարժւում է տէրը, երկու ձեռքով բռնած ունենալով



արծաթի թեփշին, որի մէջ է ս. քարը: Ժողովրդի անթիւ, անհամար բազմութիւն խորին ակնածութեամբ շարժում է տէրի յետեւից: Դպիրները տէրին խնկարկում են: Տէրը լուռ է. նա չի երգում. նրա սրտում մեծ խորհուրդներ են կատարւում այդ ընկերին: Ժամանակ առ ժամանակ տէրը նայում է երկրներին, կամ ուղղում է իր հայեացքը դէպի Արթոն, որտեղից այդ ընկերին ամպերի կոյտերը միմեանց յետեւից դուրս են լողում: Երկիրները քիչ քիչ ծածկւում է ամպերով. գետնի վրայ տեղ տեղ լայնածաւալ ստուերներ են երևում: Հասնում են գետը: Տէրն սկսում է կարգ կատարել. երգում են շարականներ. յետոյ ծնկաչոք «Տէր ողորմեա»: Տէրը առանց հողաթափները հանելու մտնում է գետը ու մինչև ծնկներ թաղւում ջրի մէջ: Նրա օրի նակին հետևում են ծերերը, մահտեսիները (բացի փարմասուն մահտեսի Մնացական ապօրից, որը սատանէն է գիտում որ պատի տակին նստած այդ միջոցին տէրին բամբասում է) ու իշխանները, որոնք կանգնում են ջրի մէջ այն կարգով, ինչպէս այդ լինում է Քրիստոսի Մկրտութեան օրը: Գրքակալը դրնում են տէրի առաջին, և նա ջրի մէջ կանգնած մի քանի գլուխ աւետարան է կարդում:

Յետոյ սկսում է կրկին երգեցողութիւն: Բոլորը նայում են այն ընկերին տէրին, որը, վերցնելով խորին երկիւղածութեամբ թեփշից Արթոնայ քարը, համբուրում է ու բաց թողնում ձեռքից դէպի գետի խորքը: Տէրը դուրս է գալիս գետից. թափորը դառնում է եկեղեցի: Այդ ընկերին մութը պատում է ամբողջ աշխարհը: Երկնքի վրայ արեգակն այլ ևս չի փայլում: Ամպերն ամեն ինչ ծածկում են: Եկեղեցու զանգակներն աւետում են ամբողջ աշխարհին կեանք և կենդանութիւն: Յանկարծ Արթոնայ կողմերում փայլում է կայծակն ու լուսաւորում մութ երկիրները: Յանկարծ օդի մէջ լսւում է մի ուժգին շրվիւղ, թափւում են կենսաբեր անձրևի առաջին կաթիլները, որոնք գնալով զօրեղանում են ու մեծանում: Աշխարհը լիանում է: Մարդ, անասուն և բոյս կարծես մեռելութիւնից կենդանութիւն են ստանում, այնքան մեծ է նրանց ուրախութիւնը: Առուակներն ու վտակները դէս ու դէն օձի նման ոլորւում. գետերը լայնանում ու մռնչում են: Ջրի կատաղի հոսանքը քարը քարի վրայ չի թողնում գետի խորքում. ոչ մի ծանրութիւն չի դիմանում ալիքների ուժգին հարուածներին, միայն մի փոքրիկ ձիւնափայլ քար անշարժ



ընկած է մնում իր տեղը: Ջրի ոչ մի հարուած նրան չի դիպչում, նրա տակի աւազը չի փորում: Կատաղի հոսանքը նրա մօտով անցնելիս մեղմանում է ու կարծես մի քիչ հանգստանում, որ յետոյ նոր ոյժով առաջ շարժի ու շարունակի իր կատաղի կռիւը քարերի ու ժայռերի հետ: Այդ հրաշալի քարը Արթոնից բերուած ս. քարն է, որ իր հետ բերում է աշխարհին փրկութիւն երաշտից և որը մատչելի է միայն մեր տէրի նման արդարներին: Այդպէս կատարւում է այդ հրաշքը:

Շատ չէ անցնում, կրկին ծաղկում են լայնածաւալ դաշտերն ու հովիտները: Կանաչ կարմիր գորգերը փռւում են այս ու այն կողմ: Թռչունները նրանց մէջ թաւալւում ու ծըլլելում են, կարծես նրանք էլ օրհնելիս լինեն մեր տէրին: Անասունների երամները կրկին ծածկում են լայնածաւալ դաշտերն ու հովիտները: Հորթերը քամի վերցրած կայծակի արագութեամբ դէս ու դէն են վազում: Նիհար ու գունաթափ արտերը կրկին բարձրացնում են իրանց գլուխները ու շարէ շար կանգնում, կարծես Ալաջա սարի զոշուներ լինեն Մուխտար փաշային սպասելիս նրան ջարդ ու փշուր անելու ու շան օյինը գլխին դնելու համար:

Բայց ո՞վ է նրանց Լօրիս Մելիքովը, կը հարցնեն շատերը. — մեր տէրը: Նրա կարգին մատաղ ես. նա որ չը լինի մորեխի ու մկան ասրիները սովից կը կոտորուինք, երաշտի տարին կրակի մէջ կայրուինք, իսկ ազարի ու խուլ ցաւի տարիները հող ու մոխիր կը կորչենք: Չճմարիտ է, կան անտաշ ու կոպիտ մարդիկ, որոնք երբեմն տէրի վրայ բարկանում են, բայց վերջն էլի փոշմանում են, ու գալիս նրանց թողութիւն խնդրում: Լաւ չեմ յիշում երբ էր, տէրը Արթոն էր գնացել: Այն տարուայ երաշտը մեծ չէր, միայն մեր կողմերումն էր. տէրը չէր ուզում գնալ. շատ որ խնդրեցին, տէրը վեր կացաւ, գնաց: Յետ դառնալիս Խաչ-Բուլաղում նրան պատահում են թուրք հովիւներ: Այդ տարին Խաչ-Բուլաղում սաստիկ անձրևներ էին գալիս: Թուրքերը, երբ տեսնում են տէրին Արթոնից գալիս, իսկոյն իմանում են, որ տէրը գնացել ասանձրև բերելու. դառնում են նրան ու ասում. «Ա՛. քէշիշ, ա քո աղբաթը խէր ըլի, մենք այստեղ անձրևի տակ փտում ենք, իսկ դու գնացել ես էլի անձրև բերելու. բա մենք խեղճ չե՞նք, մեզ Աստուած չի ստեղծել, Արի մեզ լսի՛ր, քարը տար էլի կրկին իր տեղը դի՛ր»: Տէրը, ի հարկէ, նրանց չի լսում: Թուրքերն



ուղում են քարը խել. տէրն ասում է, որ Արթոն ճգնաւորը ձեզ կուչ կածի: Թուրքերը վախենում են ու քարին էլ համարձակում չեն ձեռք տալ. կրկին խնդրում են, որ քարը լետ տանի, տէրը չի լսում ու շարունակում է իր ճանապարհը: Վայրենի հովիւներն իրանց էլ կարողանում չեն զսպել ու սկսում են մհակներով թակել տէրին. էլ ոչ ձեռք, ոչ ոտ, ոչ մէջք, ոչ ուս են թողնում, — աջ ու ձախ հէնց ածոց են անում ու նի պրանում: Այդ դեռ բաւական չէ, անիրաւները շներին տէրի յետեից քիս են տալիս: Բայց մեր տէրն ընկած, դուրս եկած մարդ է, շատ թաւակից է նա պանիր կերել. պատահած տեղը մազէ կարմնջով անց կը կենայ. ոտով այնքան Արթոն է գնացել, եկել, որ ամեն ձի էլ չի կարող նրա հետ մանգզիլ <sup>1)</sup> չափել:

Շները երբ յարձակւում են, տէրը, ջահլութիւնը միտը գցելով, փրաջէն գոտիկն է հաւաքում, երեսին մի թեթեւ խաչ անում ու զորս դու պատուիրեցեր ճոխտը վեր կենում: Հովիւները տեսնում են որ ոչ թէ շները, այլ հրացանի գնտակն անգամ նրա յետեից չի հասնիլ: Այդպիսով տէրը շներից պրծնում է.

<sup>1)</sup> Տարածութիւն:

բայց երբ եկաւ տուն հասաւ, ամբողջ տասն օր պարկեց: Անառտուած հովիւները տէրի ամբողջ մարմինը համարեա ջարդել էին. արաղ քսեցին տէրի ջանին, դէս արին, դէն արին, Գուլունց դալլաքն արին առաւ մարմնից ու այդպիսով շուտով տէրին ոտի վրայ դրին, որ Արթոնայ քարը հրետին գետը գցի: Քարը գցեց. անձրեւները մեր կողմերը եկան, իսկ երաշտն անցաւ Խաչ-բուլաղ: Թուրքերն այս որ տեսան, իսկոյն հասկացան, որ տէրի անէծքը Ս. Արթոնը լսել է և հիմա նրանց պատժում է:

Ի՞նչ անէին, ո՞նց անէին. վերջապէս վրձուեցին մի-մի գառ առած գան տէրից թողութիւն խնդրեն. եկան իրանց իւզբաշու հետ միասին, տէրի համար մինչև 10—15 գառը բերին, մեղայ եկան ու խնդրեցին, որ տէրն աղօթի ու խնդրի Արթոն ճգնաւորին ների նրանց: Տէրն ընդունեց գառները, խրատեց թուրքերին ու խոստացաւ աղօթել: Ս. Արթոնը լսեց տէրի աղօթքներն, ու շաբթից յետոյ Խաչ-Բուլաղում կրկին սկսուեցին անձրեւները:

Ասենք թուրքերին էլի մի կերպ կարելի է ներել, որ նրանք տէրի քէֆին դիպան. ճոկ հաւատի մարդիկ են. նրանք երբեմն ի-



րանց մօլլին էլ մի բանի տեղ չեն դնում, ոչ թէ միայն մեր տէրին: Տեսէք, ինչ էին ուղում անել տէրի հետ հայ քրիստոնեայ մարդիկ: Կռուի տարին էլի սաստիկ երաշտ էր, իսկ տէրը հակառակի պէս հիւանդ պարկած էր. դէս ու դէն արին, մի կերպով տէրին լաւացրին ու Արթոն ուղարկեցին: Տէրը վայ էն հալին գնաց, քարը բերաւ ու ջուրը գցեց: Երաշտը, ինչպէս միշտ, այդ անգամ էլ անհետացաւ: Մեր կողմերում լաւ անձրևներ եկան, իսկ Քարկապի ու Դաւաշովի սարերի վերայ սաստիկ կարկուտ եկաւ ու բոլոր արտերը ոչնչացրեց: Դժբաղդութիւնը մեծ էր, բայց ինչ արած. Աստուծոյ պատիժ էր, պէտք էր համբերութեամբ տարած: Յայտնի է, որ քարկապեցիք ու դաւաշովեցիք կոշտ ու կոպիտ լեռնականներ են: Նրանց համար օրէնք չը կայ գրած. նրանք համբերել չը գիտեն. բոլոր մեղն իսկոյն խեղճ տէրի վրայ գցեցին, ասելով. «Նրա տունը իր գլխին քանդվի. նա խի՞ ա գնացել կարկուտի քար բերել: Մենք նրան ասել ենք անձրևի բեր, թէ կարկուտի: Ահր էդ ետդի տարած երէցը տակէց մեզ հետ չունի, այս տարի մենք էլ գնացինք, խնդրեցինք, որ Արթոն գնայ անձրևի քար բերի. աջահամբուրդ, — ասացինք, — ան տէր, լեռոյ կը

տանք: Տուն կրակ ընկածը գնաց ու մեզ համար կարկուտի քար բերաւ, ան կարկուտը նրա տուն ու տեղը սկի, տանի: Աչքովս տեսայ, ինչպէս մի կիսավայրենի դառչովեցի կատաղութիւնից պռոշները կրծոտում էր ու, գլուխը թափահարելով, ինքն իրան մռնչում և ասում. «Ը՛ր՛, Արթոնայ երէց, էդ որտեղ ես. ո՛ւր ես, մի ճանկս ընկնես, թիքա-թիքա կոտորեմ քեզ: Անձրևի քարը գլխէդ կտրվել էր, որ կարկուտի բերան»: Այդ դեռ բաւական չի. սարսաղ դառչովեցիներն ուղում էին գնան սրբազանին գանգատ անել, թէ «Սուրբ տղան հայր, տէր-Առուշանը գնացել ա Արթոնայ սարը կարկուտի քար բերել ու մեր տուն ու տողը քանդել: Նրան հող ու մոխիր կորցրու, թէ հու չէ գնում ենք կաթղակոսին գանգատ»:

Տեսանք, որ բանն այդտեղ է հասնում, մի քանի իշխան մարդիկ ուղարկեցինք Քարկապ ու Դաւաշով, որ մի կերպով խեղճ աններին խելքի բերեն ու տէրի հետ հաշտեցնեն: Մեր մարդիկը գնացին ու ասացին. «Ա՛յ մարդիկ, զիժ չէք, պել չէք. անձրևի քարը ո՞րն ա, կարկուտի քարն որը: Արթոնայ քարը մի տեսակ է լինում. մենք տեսել ենք. մեր տէրը մեզ ցոյց ա տալիս: Քարը ջուրը



գցելուց յետոյ երկնքից կամ փրկութիւն, կամ պատիժ պէտք է սպասել: Եթէ մեր աղօթքներով Աստուծոյ գութը շարժում ենք, անձը է գալիս, իսկ եթէ ոչ, նա աւելի սաստիկ է պատժում ու կարկուտ է ուղարկում, — ուրեմն տէրը ինչ մեղք ունի այստեղ: Ասում էք՝ գնանք սուրբազանին գանգատ անենք. իսկի միաք էք անում, թէ ինչ էք ասում: Լաւ, գնացիք գանգատ արիք: Նա որ ձեր գանգատը բանի տեղ չդրաւ, կասէք, գնում ենք կաթողակոսին գանգատ անենք: Սուրբազանը կասի՝ լաւ գնացէք: Կը գնաք Եջմիածին: Ով օ՛ր իմանում, բալքի կաթողակոսը ձեզ ծուռ ա համարում ու անիծում: Բաւական ա, որ նա մի բերան ասի՝ «անիծեալ լինէք»: Այն ժամանակ ոչ էս աշխարհում, ոչ էն աշխարհում հանգստութիւն չէք ունենալ դուք. ոչ թա ոչխար, գառը, եզն ու արջառ, այլ որ ձեր որդկերանց էլ մատաղ անէք սուրբերին, էլի էն աշխարհում դժոխքի տանջանքներից չէք պրծնիլ»:

Այս որ լսում են լեռնականները, շլինքները քորում են ու վճռում են իրանց միջից մի քանի աղսախկալներ ուղարկել տէրի մօտ նրա աջն առնելու ու թողութիւն խնդրելու: Աղսախկալներն եկան. տէրի համար պանիր,

կարագ ու մեղր բերան իրանց հետ, թողութիւն խնդրեցին ու աջն առան: Տէրը ներեց ու օրհնեց նրանց, բայց դորանից յետոյ համարեա մի ամբողջ տարի նա ոտք չի դրեց Քարկապի ու Դառչովի կողմերում. այն վայրենիները ո՞վ է իմանում ինչ օյին դնէին տէրի գլխին, եթէ նա նրանց մէջ երևար:

Չի կարելի ասել, թէ մեր տէրը վախկոտ մարդ է: Հարկը պահանջած դէպքում նա միշտ պարաստ է իր կեանքը մահու տալ իր թողութիւն համար. ազար, մահ, ցաւ, հազար ու մի չոռ ու ցաւ պատահած դէպքում նա հօր պէս իր ժողովրդին հսկում է ու «պաշտպանում է նրան ամեն տեսակ պատուհասներից: Խուլ ցաւի <sup>1)</sup> տարին մեր տէրն էր, որ կարողացաւ իր ժողովրդին Աստուծոյ ճանապարհի վրայ պահել ու փրկել նրան անգառնալի կորստից ու դժոխքի անվերջ չարչարանքներից: Խուլ ցաւն ո՞վ չի տեսել. ազար ա, քամու պէս մի քանի օր, շատ շատ մի քանի շաբաթ փչում է ու կրկին անհետանում: Մեռնողը մեռնում ա, ապրողն ապրում. ում ճակատին ինչ գրուած է, այն է կատարում. զարմանալի ոչինչ չը կայ: Բա դու չես ասիլ,

<sup>1)</sup> Խուլերա:



որ այն ժամանակ գտնուում էին մարդիկ, որոնք մեզ ու մեր տէրի վրայ ծիծաղում էին ու ուզում էին մեզ առանց աղօթքի ու մատաղի մահի ճանկերից ազատել: Հակառակի պես խուլ ցաւն ամառուայ ժամանակն էր, երբ աշխարհքիս ամեն կողմերից շրջապակաւորներ են գալիս, շէնս լցւում. մինը Մոսկովի սամթիցն ա, մի ֆրանգի, մինը Լէմսի, մինն Ինգլիզի, — մի խօսքով որտեղ այիւր-բէն սովորող կայ, փախած շէնս ա գալիս, ինչպէս իրանք գրաբար ասում են՝ «մի փոքր ինչ հանգստանալու ու թարմ օդ շնչելու համար»: Գալիս են մեծ մեծ խօսում ու մեզ խելք սովրեցնում. էլ ոչ հնձում են, ոչ խալսում, ոչ վարում են, ոչ ցանում: Նրանց բանը հէնց այն ա՝ հաւաքուել էս ծառի, էն ծառի տակ, էս աղբրի, էն աղբրի մօտ, նայել էս հարսի, էն հարսի յետեից, կասես, թէ մեր հարսներն իրանց տեսած շրջապակաւորներից լինեն: Հա՛, ասեցի, որ խուլ ցաւի տարին էդ պարունները շէնս լցրել էին: Երբ մի, երկու մեռնող եղաւ, մին էլ տեսանք մեր շրջապակաւորները՝ որը թուղթ ու զալամ, որը կազէթ ձեռներին շէնս ընկած ման են գալիս, շներին հաչացնելու համար գիւղի գլխին իրանց առջևից ունենալով: Գլխը մի բերան հէնց գոռում էր. «սա-

միտարնիք են գալիս, ա՛ խալիւր, դռներն ու տները թամուզ արէք»: Սկզբում բան չէինք հասկանում. յետոյ իմացանք, որ մեծաւորը մեր շրջապակաւորներին սամիտարնիք ա նշանակել ու հրամայել նրանց, որ մեր ու շրջակայ գիւղերի վրայ հսկեն: Դէ եկ էշը փխկից հանի. առաջ մենք հանգստութիւն չունէինք շրջապակաւորներից, իսկ հիմա նրանք մեր հողերը բոլորովին կը հանեն, — այդ էր մեր բոլորիս կարծիքը և հէնց համարեա այդպէս էլ եղաւ: Անունները սամիտարների դրած, կազէթները ձեռներին շէնս ընկած ամեն մի պատի տակի սրան-նրան քարոզ են տալիս, թէ էս կերէք, էն ոչ, էս խմեցէք, էն ոչ, կասես, թա խուլ ցաւը երբ գալիս ա պկիցդ բռնում, հարցնում ա, թա էսօրի ի՞նչ զահրումար ես կերել կամ խմել: Այդ դեռ բաւական չի. ասում են՝ պաս միք պահիլ, մեռելի վրայ միք խմբուիլ ու լաց լինիլ. ասում են առհասարակ միմեանցից ճոկ-ճոկ ման եկէք. մի տեղ միք հաւաքուիլ (ուզում էին եկէք. մի տեղ միք հաւաքուիլ) (ուզում էին հասկացնել, որ ժամ չը գնանք, թափօր չանենք). ժամարարին ու ժողովրդին ժամահաց մի տուէք. մատաղ միք անիլ, այդ բաներից ցաւն սուելի կը տարածուի: Մինն ասէր. «ատա ցաւը դուք ինքներդ էք. ոտից մինչև



գլուխ սպիտակ շորեր հագած, հէնց էք ջաղացպանի ալրաթաթախ շներ լինէք, ուր որ գնում էք, ցաւը ձեր վրայից թափուում ա»։ Բայց ասող չը կար. ով պիտի մեզանից ասէր. մենք խեղճ ըռհաթ մարդիկ ենք. մեր գլխին մեծ ու մեծաւոր ունինք։ Եթէ ասէինք, սամիտարնիքը կը գնային մեծաւորին գանգատ. նա էլ ասողին կը կանչէր, կը բարկանար, մի երկու անգամ ճպատով կը տար ու գեռ ըշտորափ էլ կառնէր։ Ասենք մեծաւորը մեր աղէն ա, թող տայ, եթէ հարկաւոր ա տալ, նրա տուածից ցաւ չի տալիս. իսկ սամիտարնիքն ինչացու են, որ նրանց համար մեր աղէն մեզ վրայ բարկանայ ու իր քէֆը խարաբ անի։ Սամիտարնիքը տեսան, որ մենք սուս ենք կենում, աւելի սարսաղուեցին։ Կոտրած գդալի պէս սկսեցին ամեն բանի մէջ ընկնել, խառնուել. էլ թող չէին անում, որ մի հալալ հաց ուտենք, կամ մենք մեր գլխի ճարը տեսնենք։ Շատ որ զահլա տարան, մի քանի մարդ հաւաքուեցինք ու գնացինք տէրին գանգատուելու, թա՛ «ա՛ տէր, կարգիդ մատաղ, դու այդ ոչ բարով սամիտարների ըռեսը մի փոքր հաւաքի, նրանց աչքը մի քիչ վախցրու»։ Սկզբում տէրն էլ մի քիչ քաշուում էր նրանցից. նա ասաց մեզ. «ա՛ որդիք, ո՛նց վախց-

նեմ նրանց, որոնք ոչ Աստուածանից են վախենում, ոչ մարդկանցից, որոնց համար ոչ վերջի դատաստան կայ, ոչ Գաբրիէլ հրեշտակապետ, որոնք միշտ կազէթներ են կարդում ու մեծաւորների հետ խօսում, կարծես իրանք էլ մեծաւորներ լինեն»։ Բայց էլի մեր յոյսը տէրից չը կտրեցինք. բոլորս էլ միաբերան ասում էինք, որ նա մեր շէնը պէտք ա սամիտարներից փրկի. նրանց յետեից այն ժամանակ ցաւը կամաց-կամաց կանհետանայ։ Վարդափառի պատում ցաւը սաստկացաւ։ Ամեն տան համարեա թէ սուգ ու շիւան էր տիրում։ Սամիտարնիքը շէնս ընկած քարոզում էին, որ գիւղացիներն ամենեւին պաս չը պահեն. մսեղէն կերակուր գործածեն։

Մեր տէրն այդ ժամանակ էլ հանգստութիւն չունէր. մեռելը մեռելի յետեից տանում էր գերեզմանատուն, յետոյ մի քանի մեծ մարդկանց հետ գալիս էր մեռելատուն ժամահաց ուտելու ու մի-երկու ողորմի ասելու. բացի այդ միւս ազատ ժամերին փոխանակ հանգիստ տանը նստելու ժողովուրդին ետեից արած գընում էր այս կամ այն սրբատեղին թափօր կատարելու։ Այդ թափօրների ժամանակ լսոց էր լինում տէրը, լաց էր լինում ժողովուրդը. ամեն մարդ իր աչքի առջև տեսնում էր մա-



հը և ողբում էր ոչ թէ իր, այլ իր սիրելիներին սպառնացող կորուստը:

Մահը երբ սաստկացաւ, տէրը բացի թափօրներ կատարելուց սկսեց նաև խոստովանել ու հաղորդել ժողովրդին, մեծից սկսած մինչև փոքրը: Վարդավառ կիրակի օրը մեր տէրը մեծ կարգ կատարեց եկեղեցում: Պատարագի ժամանակ բոլորի աչքերում արտասուք էր փայլում. ամեն մարդ, ջերմեռանդ աղօթելով իր մեղքերն էր քաւում: Երբ տէրը կանգում էր դէպի ժողովուրդն ու «խաղաղութիւն ամենեցուն» ասում, բոլոր ներկայ եղողները ծունկ էին չոքում ու թեքում իրանց գլուխները դէպի գետին, հեղեղի նման արտասուք թափելով աչքերից: Երբ տէրը ս. սկիհը երկու ձեռով բռնած չոքեց սեղանի ծայրին, նախ քան հաղորդութեան ս. խորհուրդն սկսելը, նա դարձաւ ժողովրդին հետևեալ խօսքերով. «Սիրելի եղբայրներ և քույրեր, սիրելի ժողովուրդ հայոց, ողջոյն և աւետիք ձեզ: Հրեշտակների փողերը հնչում են երկրի բարձրութեան վրայ: Տէրը կանչում է մեզ իր մօտ. թողնենք մեր մեղքերը այս անցաւոր աշխարհում, մաքուր խղճով ու արդար սրտով շտապենք տեղ բռնել արդարների շարքում, Տիրոջ աջ կողմում: Ամբողջ աշխարհս տառապում

է մեղքերի ծանրութեան տակ: Մենք պիտի քաւենք մեր մեղքերը, որ Տէրը մեզ չը պատժի, որ նա հեռացնի մեզնից այս մահաբեր ցաւը. բայց ընդհակառակը փոխանակ այդ անելու, ուղղում են մեր մեղքերի վրայ նոր-նոր մեղքեր բարձել, որ մենք իսպառ ոչնչանանք, որ դժոխքումն էլ մեզ համար տեղ չը գտնուի: Մեզ ասում են՝ պատն թնչ ա, պատ միք պահիլ, ժամն թնչ ա, ժամ միք գնալ, հոգեհացն թնչ ա, քահանային ու ժողովրդին հոգեհաց միք տալ,—բայց այդ բոլորը տեսնուած ու լսուած բան ա, սիրելի ժողովուրդ, բա գիտէք, թա վերևից այդ Տէրը չի լսում ու չի տեսնում: Խուլ ցաւն էլ միւս պատուհասների պէս Աստուածային պատիժ ա. ում ճակատին գրուած է նրանից մեռնելը, կը մեռնի, ում ոչ,—ոչ: Մահի ճանկերից չի կարելի փախչել. մահն Աստուած է ուղարկում մեզ համար: Ուր էլ լինենք՝ մեզ փնտռող մահը կը գտնի մեզ. ոչ սար, ոչ ձոր, ոչ անտառ, ոչ անապատ մեզ թաքցնել չեն կարող նրանից: Նա ոչ մի արգելքից չի վախենում. նա ամեն բան տեսնում ա, ամեն բան իմանում: Եթէ նա տանում է մեղաւորին, այդ պատիժ է նրա մեղքերի, նրա անարժան կեանքի համար. եթէ նա տանում է արդարին, անմեղ



մանկան, այդ դէպքում նույնպէս Տիրոջ հրամանն է կատարւում, որպէս զի արդարը չը փչանայ այս մեղաւոր աշխարհում, ուր ամեն քայլափոխում մարդ կարող է գայթակղուել ու խաբուել սատանայից: Իսկ գիտէք ո՞վ է և ո՞ւր է սատանան. նայեցէք ձեր չորս կողմը և կը տեսնէք նրան: Այդ սատանան այժմս ամեն ընկեր ձեր ականջին փսփսում է՝ «պապ կերէք, միշտ իւղ ու փլաւ վայելեցէք, եկեղեցում ու ուխտատեղերում միք կուտակուիլ, թափօրները ձեզ մահից չեն փրկիլ, մեռելներն ետևից խմբերով միք գնալ, նրանց դիակներին միք դիփչիլ, եթէ դիփչէք էլ, ձեռներդ ահա այս դեղերով լուացէք, մատաղներ միք անիլ, մատաղի միս բաժանելով, դուք ցաւն աւելի էք տարածում, հոգեհաց միք տալ, տէրտէրը թող գնայ իրա տանը հաց ուտի, նա իր պարտաւորութիւններն է միայն կատարում, դուք պարտաւոր չէք նրան ու նրա տիրացուներին կերակրելու», մի խօսքով էլ բան չի մնում, որ սամիտարնի սատանան ձեզ չասի: Միք լսիլ, սիրելիք իմ. նղովեալ լինի նա, ով կը լսի սամիտարնուհ, այս ս. հաղորդութեանը անարժան է այդպիսին. նրան ոչ թէ միայն խուլ ցաւ, այլ այն աշխար-

հում դժոխքի անվերջ ահռելի չարչարանքներն են սպասում»:

Այդպէս մեր տէրը ներկեց սամիտարներին և չը թողեց, որ իր ժողովրդի կապը նրանց ձեռքում մնայ:

Մինչև օրս էլ մեր տէրն է իր ժողովրդի դին ուղիղ ճանապարհ ցոյց տալի: Լուծը մեր ուսերին դրած, մեր տէրը լծան վրայ նստած գութանի հօտաղի պէս հօ անում մեզ ու առաջ քշում: Երբ տեսնում է, որ մէկը ճանապարհից ծուռում ա, ճիպտոն առնում ու այնքան նի պրանում, աջ ու ձախ խփում, որ նա կրկին իր խելքը գլուխն է հաւաքում ու կրկին լուռ ու մուռն շարունակում տէրի ցոյց տուած ճանապարհով գնալ:





6460

2013



## «Լ ՈՒՄԱՅ»

գրական հանդիսից արտատպուած գրքերի  
ցուցակ

1. ԻՍ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. Ստեփաննոս Պալա-  
սանեան գ. 25 է.
2. ՊՕՏԱՊԷՆԿՕ. Մի կտոր հաց. Թարգմ. Գ.  
քահ. Աղանեանց գ. 10 է.
3. ՍԵՆԿԵՒԻՉ. Դէպի Աթէնք. Թարգմ. Գ.  
քահ. Աղանեանց գ. 15 է.
4. Դաստիարակութեան զօրութիւնը. Թարգմ.  
Ս. Մանդինեան գ. 30 է.
5. ԲԱԿ ԿԻՂԻԿԻԱ գ. 15 է.
6. Ն. ՏԷՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆ. Խաչատուր Աբովեան
7. Անժամանակ Թատրոն և ընթերցանութիւն.  
Թարգմ. Ս. Մանդինեան գ. 25 է.
8. ՊԵՍՏԱԼՈՅՑԻ. Լինհարդ և Գերտրուդ.  
Թարգմ. Իս. Յարութիւնեան
9. ԻՍ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. Աշակերտի յուշա-  
տետրը գ. 30 է.
10. ՍՏ. ԱԻԵՏԻՔԵԱՆ. Ղեկավարներ գ. 40 է.

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊԵԿ